20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 164(5016)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Մարդասպանին հերոսացնելը խեղաթյուրում է համակարգը

ԱՄՆ Կոնգրեսի անդամ Դեյն Ռոռաբախերի՝ Ներկայացուցիչների պալատին ներկայացրած օրինագիծը, որով կոչ է արվում անցկացնելու հանրաքվե Իրանի ադրբեջանական շրջաններում, թե արդյոք այդ շրջանների բնակիչներն ուզո՞ւմ են միավորվել Ադրբեջանին, թե՞ մնալ Իրանի կազմում, ադրբեջանագետ **Սարգիս Ասատրյանը** համարում է Իրանը ապակայունացնելուն ուղղված քայլ: Ըստ նրա՝ ԱՄՆ-ը եւ Արեւմուտքը Իրանը թուլացնելու նպատակով տարբեր քայլերի են դիմում: «Երկիրը կազմաքանդելու ու անհարմար ռեժիմից հանելու ամենալավ միջոցն ապակայունացումն է», երեկվա ասուլիսի ժամանակ հավելեց Սարգիս Ասատրյանը:

Իսկ իրանագետ **Վարդան Ոսկանյանը** նշում է, որ Իրանում թյուրքալեզու իրանցիներն իրենց չեն համարում ադրբեջանցիներ: Նրա կարծիքով՝ ադրբեջանական գործոնը Իրանի դեմ վերջերս սկսում են ավելի ակտիվ օգտագործել:

Ինչ վերաբերում է ոճրագործ Ռամիլ Սաֆարովի էքստրադիցիային, իրանագետը նշում է, որ Ադրբեջանի տեղաբնիկ ժողովուրդներն անհանգստացած են մարդասպանի հերոսացման փաստով, քանի որ յուրաքանչյուր երկրում մարդասպանին հերոսացնելը խեղաթյուրում է ամբողջ համակարգը: Վարդան Ոսկանյանը նաեւ բացատրում է, որ տեղաբնիկ ժողովուրդներ իրենք համարում է ազգային փոքրամասնություններին, քանի որ նրանք նախ փոքրամասնություն չեն կազմում, երկրորդ՝ բնակվել են այդ տարածքում նախքան Ադրբեջան պետության ստեղծումը:

Ի. Պ.

# ՀԱՊԿ զորավարժություններն ավարտվեցին. «հակառակորդը» ոչնչացված է



ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի հետ «Փոխգործակցություն-2012» համատեղ օպերատիվ-ռազմավարական զորավարժությունների եզրափակիչ փուլի մեկնարկը տրվեց երեկ «Մարշալ Բաղրամյան» զորավարժարանում՝ ներկայությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի, ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժայի, բարձրաստիճան զինվորականների, ՀԱՊԿ քարտուղարության ներկայացուցիչների: Զորավարժությանը մասնակցել են 2000 զինծառայող, 500 միավոր ռազմատեխնիկա, ավիացիա, 50 միավոր հրետանի, 200 ավտոմեքենա, 1,5 հազար միավոր հրազեն:

Տես էջ 8

# Ֆրանսիայի բոլոր դեսպանատները պետք է անվտանգության կոչը նկատի առնեն

Ֆրանսիական «Շառլի Էբդո» ամսագրի երեքշաբթի օրը հրապարակված Մուհամմեդ մարգարեի ծաղրանկարները մուսուլմանների անհանգստությունն են առաջացրել, իսկ Ֆրանսիայի իշխանությունները անվտանգության նկատառումներով որոշել են աշխարհի 20 երկրներում ժամանակավորապես փակել Ֆրանսիայի դեսպանատները, Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Լորան Ֆաբիուսը Ֆրանսիայի բոլոր դեսպանություններին անվտանգության ապահովման միջոցառումներ ձեռնարկելու կոչ է արել՝ ըստ տվյալ երկրի իրավիճակի եւ առանձնահատկությունների: Ըստ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանի մամուլի քարտուղար **Մերի Հակոբյանի՝** թեեւ այդ կոչը ավելի շատ իսլամական երկրներում գտնվող դեսպանատներին է վերաբերում, սակայն բոլոր դեսպանությունները պետք է նկատի առնեն դա:

Մ. Խ.

# Հատուկ տեխնիկա Սեւանի «Հարսնաքարում»



Հարգելի խմբագրություն. Օգոստոսի 19-ին գործով գնացել էի Սեւան: Շատ էի լսել, որ հայտնի դեպքերի կապակցությամբ ժողովուրդը այս տարի բոյկոտել է եւ չի գնում Նեմեցի օբյեկտներում հանգստանալու: Որոշեցի ստուգել, թե դա ինչքանով է համապատասխանում է իրականությանը, ու մտա Սեւանի «Հարսնաքար»: Իրոք մեռյալ վիճակ էր, սակայն նկատեցի համալիրի տարածքում կայանված հատուկ տեխնիկա: Զարմացա, թե ինչ գործ ունի Երեւանի քաղաքապետարանին պատկանող հատուկ տեխնիկան Նեմեցի մոտ՝ այն էլ անգործ կանգնած: Սեպտեմբերի 17-ին նորից գործով գնացել էի Սեւան եւ որոշեցի ստուգել, թե արդյոք հատուկ տեխնիկան դեռ կայանվա՞ծ է «Հարսնաքարում»: Մեծ եղավ զարմանքս, երբ տեսա, որ ավտոմեքենան դեռ կանգնած է նույն տեղում եւ նույն դիրքով: Այդ տեխնիկան նախատեսված է մեծ տարիք ունեցող ծառերը առանց արմատային փունջը վնասելու արմատախիլ անելով այլ տարածքում տնկելու համար: Մեկ երկու օրվա ընթացքում ամայի տարածքը կարելի է վերածել կանաչապատ տարածքի:

Ձեր խմբագրության միջոցով ցանկանում եմ հարց ուղղել Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին՝ մեկ ամիս շարունակ ի՞նչ է անում Երեւանի քաղաքապետարանի հաշվեկշռի վրա գտնվող հատուկ տեխնիկան Սեւանի «Հարսնաքար» հյուրանոցային համալիրում: Ուղարկում եմ Ձեզ իմ կատարած մի քանի լուսանկար, որտեղ պատկերված է Երեւանի նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանի օրոք Երեւանի քաղաքապետարանի ձեռք բերած հատուկ տեխնիկան, որի գինը, ի դեպ, մի քանի հարյուր հազար դոլար է Կանադայում:

P.S. Չեմ զարմանա, եթե մեկ տարի անց այդ տեխնիկան կոպեկներով դուրս գրվի եւ դառնա Նեմեցի սեփականությունը:

*Հարգանքով՝*

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Ադրբեջանական «իրավագիտակցություն»

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Իլիամալիեւյան աշխատակազմի «իրավագետ» Ֆուադ Ալեսկերովը Եվրոխորհրդարանի՝ Ռամիլ Սաֆարովի էքստրադիցիայի հարցով բանաձեւը համարել է «փաստերի խեղաթյուրում»: Եվրոխորհրդարանը Ադրբեջանի պահվածքը որակել է «դիվանագիտական պարտավորությունից հրաժարում»՝ հրապարակելով այդ երկրի արդարադատության նախարարության պատասխանը հունգարական կողմին:

Ծանրումեծ դատողություններ անելով էքստրադիցիայի մասին եվրոպական կոնվենցիայի շուրջը՝ Ֆուադ Ալեսկերովը «հիմնավորում է», թե ադրբեջանական կողմը «ոչ թե հավաստիացրել է, որ Ռամիլ Սաֆարովը կշարունակի կրել պատիժը՝ առնվազն մինչեւ կլրանա ցմահ ազատազրկման 25-ամյա ժամկետը, այլ մեկնաբանել է ազգային օրենսդրությունը»:

Տեսնո՞ւմ եք «տարբերությունը». հունգարական կողմը պաշտոնապես խնդրել է ներկայացնել, թե Ադրբեջանի օրենսդրությամբ ցմահ ազատազրկման դատապարտվածը ի՞նչ հիմքով եւ ժամկետներում կարող է «պայմանական վաղաժամկետ ազատվել պատժի հետագա կրումից», իսկ Ադրբեջանի արդարադատության նախարարությունն էլ պատասխանել է, որ, համաձայն օրենսդրության, այդ կարգի դատապարտյալների հանդեպ «դատական լրացուցիչ պրոցեդուրայով պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել ոչ վաղ, քան 25 տարի պատիժը կրելուց հետո»:

Հունգարական կողմը լրացուցիչ պարզաբանում է խնդրել՝ Ադրբեջանում Սաֆարովի հանդեպ «լրացուցիչ դատական պրոցեդուրա կիրառվելո՞ւ է»:

Տես էջ 2

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

**Հակոբ Հակոբյանի խոհագրության էջերից - կորսված Այնթապն ու իր ավանդույթները. «Կորուսյալ դրախտ»:**

**Մի գողտրիկ պատմություն Իսահակյան ընտանիքի անցյալից. Ավիկ Իսահակյան՝ «Բանան»:**

**Նորայր Ադալյանի հրապարակումը՝ «Հայոց պատմությունը՝ ազգային մշակույթ», նվիրված ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի ծննդյան 85-ամյակին:**

**Սիրիահայության տագնապները - պատերազմի դեմքը: Սաքո Արեյանի վերաբերմունքը մերձավորարեւելյան իրականությանը:**

**Թատերագետ Տիգրան Մարտիրոսյանի դիտարկումները Ուսումնական թատրոնի (ԵԹԿՊԻ) բեմում Գաբրիել Գարսիա Մարկեսի «Ես միայն զանգահարելու եմ» պատմվածքի բեմականացման մանրամասներին:**

**Երաժշտագետ Մարինե Կարոյանի հանդիպումը «Բորոդին» քառյակի առաջին ջութակ Ռուբեն Ահարոնյանի հետ:**

Մ. Բ.

# Առաջատար պետության՝ Սինգապուրի փորձը

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Այս հանդիպման առիթը Լոս Անջելեսում (Գլենդեյլ) լույս տեսնող «Նոր կեանք» շաբաթաթերթի այս տարվա թիվ 28, 29, 30 համարներում (հունիսի 14, 21, 28) շարունակաբար հրապարակված **Մարո Մադոյան-Ալաջաջյանի** «Լի Քուան Եու» վերտառությամբ հոդվածաշարն է, ենթավերնագրված «Ժողովրդի հայրն ու մեծ առաջնորդը, ով յետամնաց գաղութային կայանը դարձրեց աշխարհի ամենազարգացած քաղաքպետութիւնը»: Հեղինակն ավարտել է Երեւանի պետհամալսարանի հայկական բանասիրության ֆակուլտետը, աշխատել ռադիոպետկոմում, 1980-ականներից Հայաստանից բնակության է տեղափոխվել Միացյալ Նահանգներ: ԱՄՆ-ում շարունակել է ուսումը նոր բնագավառում, ստացել մասնագիտական տարբեր կրթություն, միաժամանակ շարունակել է զբաղվել գրականագիտությամբ, հրապարակել հոդվածներ, անգլերենից կատարել թարգմանություններ: Կազմել,



հրատարակության է պատրաստել սփյուռքահայ բանաստեղծ Զարեհ Մելքոնյանի ժողովածուն, փորձել հայաստանյան ընթերցողին ճանաչելի դարձնել սփյուռքի, ի մասնավորի Զ. Մելքոնյանի գրականությունը: Հանգամանքների բերումով ապրել է նաեւ Սինգապուրում: Ամուսինը՝ մասնագիտությամբ ֆիզիկոս Գեւորգ Ալաջաջյանը, ԵՊՀ ասպիրանտ, Մ. Նահանգներում մագիստրոսի կոչում ստանալով, աշխատանքի է անցնում «Silicon Valley»-ի տեխնոլոգիական խոշոր ընկերություններից մեկում, որը մասնաճյուղեր ունի աշխարհի տարբեր երկրներում՝ նաեւ՝ Հեռավոր Արեւելքի: Սինգապուրի կառավարության հրավերով նա աշխատանքային պայմանագրով տեղափոխվում է այդտեղ: Այս փոքր երկրի տնտեսական եւ հասարակական կյանքի մեծ առաջադիմությունից տպավորված ու հիացած՝ Մարո Ալաջաջյանը սկսել է ուսումնասիրել Սինգապուրի պատմությունը, հատկապես նրա վերածննդի շրջանը՝ 1960-ականների, երբ անդունդի եզրին գտնվող ավերակ երկիրը ոչ միայն փրկվեց վերահաս կործանումից, այլեւ աննախադեպ ծաղկում ապրեց՝ անհավատալի շրջադարձ կատարելով կյանքի բոլոր բնագավառներում եւ այսօր համարվում է աշխարհի ամենազարգացած երկրներից մեկը: Սինգապուրի ժողովուրդը ներկա բարեկեցիկ կյանքի եւ ապահով ապագայի համար պարտական է հատկապես մեկ մարդու՝ երկրի առաջին վարչապետ Լի Քուան Յուին- բացառիկ հատկանիշներով օժտված առաջնորդ՝ մարդկության պատմության այն հազվագյուտ անհատներից, ովքեր կյանքի են կոչվում հատուկ առաքելությամբ, նպատակով ու առաջադրանքով՝ դառնալով հայրենանվիրության ու ազատության տիպար օրինակ ու խորհրդանիշ:

Տես էջ 4

# Ցեղասպանություն եւ գենետիկան

Գենետիկա գիտության տեսակետից չկան առանձին գծեր, որոնցով տարբերվում են ցեղասպանություն ապրած ժողովուրդները: Թեեւ տարբեր մակարդակներով քննարկվում է, թե ցեղասպանություն ապրած ժողովուրդներն ունեն հատուկ նմանություններ, որոնք ձեռք են բերվել ցեղասպանության հետեւանքով ու փոխանցվել են սերունդներին, սակայն շատ գիտնականներ դրան համաձայն չեն:

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր եւ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի «Մարդու գենետիկայի խմբի» ղեկավար **Լեւոն Եպիսկոպոսյանը** նույնպես կարծում է, որ ցեղասպանության թողած ազդեցությունը մարդկանց հոգեբանության վրա եւ մարդկանց ապրումները գենետիկան չի կրում, եւ մարդը ցեղասպանության գենետիկական կրողը չէ:

«Ցեղասպանությունը պարզապես փոքրացրել է մեր բազմազանությունը թե՛ քանակական, թե՛ բազմազանության առումով», ավելացնում է Լեւոն Եպիսկոպոսյանը, որի պնդմամբ՝ գիտության մեջ չկան ապացույցներ, որ գոյություն ունի գենետիկական հիշողություն: Իսկ արտացոլումները երաժշտության, գրականության, ընդհանրապես մշակույթի մեջ սոցիալիզացիայի հետեւանքն են:

Բացի նրանից, որ ցեղասպանություն ապրած ժողովուրդների զավակները տվյալ ժողովրդի ցեղասպանության մասին իմանում են պատմությունից, արվեստի ստեղծագործություններից կամ պարզապես ամեն մեկն իր ընտանիքում դեռ փոքրուց լսում է այդ մասին, գոյություն ունի նաեւ մշակութային ժառանգության պատկանելություն, որը, ըստ պարոն Եպիսկոպոսյանի, բնորոշ է յուրաքանչյուր ժողովրդի: Թերեւս պատճառներից մեկն էլ սա է, որ շատ լավ իմանալով, որ Արեւմտյան Հայաստանն այսօր Թուրքիայի մասն է կազմում, այնուամենայնիվ Հայաստանում ու Սփյուռքում ապրող շատ հայեր շարունակում են անվանել այն իրենց երկիրը: Խոսքը ոչ միայն այն փաստի մասին է, որ ժամանակին դա եղել է մեր երկիրը, այլեւ այն, որ հայ ժողովուրդը նաեւ կրողն է Արեւմտյան Հայաստանում ձեւավորված պատմամշակութային ժառանգության:

Պարոն Եպիսկոպոսյանը նշում է, որ գենետիկան հիմնարար գիտություն է, օրինակ՝ իմանալով ժողովրդի գենետիկական կառուցվածքը՝ կարելի է վերականգնել ժողովրդի գենետիկական պատմությունը: Չնայած ամեն ժողովուրդ ունի իր գենետիկական պատմությունը, բայց ընդհանուր առմամբ՝ երկրագնդի բոլոր մարդկանց գենետիկական կառուցվածքը 99,8 տոկոսով նույնն է, իսկ տարբերությունները արտահայտված են մնացած 0,2 տոկոսի շրջանակներում, այսինքն՝ բոլոր մարդկանց մեջ նուկլեոտիդների 99,8 տոկոսը նույնն է, տարբերվում է նուկլեոտիդների միայն 0,2 տոկոսը:

«Ստացվում է, որ մարդիկ գենետիկորեն ավելի շատ նման են իրար, քան տարբեր: Իսկ շիմպանզեից մարդը գենետիկորեն տարբերվում է ընդամենը 1-2 տոկոսով», նշում է պարոն Եպիսկոպոսյանը:

Առանձնացնել, թե ցեղասպանություն ապրած ժողովուրդների գենետիկան հատուկ նմանություններ ունի, գիտության տեսանկյունից կլինի չհիմնավորված:

Լեւոն Եպիսկոպոսյանը նշում է, որ պոպուլյացիոն գենետիկայի միջոցով, սակայն, կարելի է շատ բան պարզել ժողովուրդների մասին (պոպուլյացիոն գենետիկան ուսումնասիրում է ժամանակակից ժողովուրդների գենետիկական կառուցվածքը): Օրինակ՝ հրեաներն իրենց պոպուլյացիոն գենետիկան ուսումնասիրելիս հայտնաբերել են, որ հրեաներն ու Պաղեստինում ապրող արաբները նույն հրեաներն են, որոնք արաբական արշավանքների ժամանակ իսլամ են ընդունել:

Կրկին անդրադառնալով ժողովուրդների գենետիկական կառուցվածքի վրա ցեղասպանության թողած հետեւանքներին՝ զրուցակիցս եւս մի անգամ ընդգծում է, որ ցեղասպանությունը փոքրացնում է տվյալ ժողովրդի բազմազանությունը, մինչդեռ գենետիկական բազմազանությունն անհրաժեշտ է տարբեր ազդեցությունների դիմակայելու համար: Հետեւաբար Հայաստանում գենետիկական բազմազանության նվազումը կարող է հանգեցնել վատ հետեւանքների:

«Արտագաղթի պատճառով հիմա դառնում ենք ավելի փոքրաթիվ, եւ ամուսնությունները լինում են մարդկանց արդեն փոքրածավալ բազմության մեջ, հետեւաբար հավանականությունը, որ կհանդիպեն վնասակար գեներ կրողները ու կծնվեն հիվանդ երեխաներ, Հայաստանում գնալով մեծանում է», ասում է Լեւոն Եպիսկոպոսյանը:

Արտագաղթը իր բազմաթիվ բացասական հետեւանքների հետ, փաստորեն, նաեւ վտանգ է ներկայացնում մնացած բնակչության առողջության համար:

Իսկ ինչ վերաբերում է կարծիքներին, թե կա մի հիվանդություն, որը բնորոշ է հայերին ու հրեաներին, քանի որ երկու ժողովուրդներն էլ ապրել են ցեղասպանություն, պարոն Եպիսկոպոսյանը հերքում է դրանք: Խոսքը երեւանյան հիվանդության կամ, ինչպես բժշկական անվանումն է, միջերկրածովյան ընտանեկան տենդի մասին է, որը համարվում է ժառանգական հիվանդություն եւ առաջին անգամ հայտնաբերվել է Հայաստանում:

Զրուցակիցս ասում է, որ երեւանյան հիվանդությունը բնորոշ է միջերկրածովյան ժողովուրդներին. այսօր դրանով հիվանդանում են ոչ միայն հայերը, հրեաները, թուրքերն ու արաբները, այլեւ հույները, իտալացիներն ու իսպանացիները:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Սեպտեմբերի 17-ին Բյուրականում մեկնարկեց երիտասարդ աստղագետների միջազգային դպրոցը

Սեպտեմբերի 17-ին Բյուրականի աստղադիտարանում (ԲԱ) մեկնարկեց երիտասարդ աստղագետների միջազգային ամառային դպրոցը, որն անցկացվում է այս շաբաթվա ընթացքում եւ բյուրականյան ամառային դպրոցների շարքում արդեն 4-րդն է: Այս անգամ դպրոցն անցկացվում է Անանիա Շիրակացու 1400-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում: Մասնակիցների թվում են շուրջ 35 երիտասարդ աստղագետներ եւ ուսանողներ Ռուսաստանից, Ուկրաինայից, Լեհաստանից, Իրանից, Հայաստանից եւ այլ երկրներից: Դասախոսություններ եւ գործնական պարապմունքներ անցկացնելու համար հրավիրված են այնպիսի նշանավոր աստղագետներ, ինչպիսիք են հնդիկ նշանավոր տիեզերաբան Ջայանթ Նարլիկարը, ԱՄՆ Կոռնելի համալսարանի պրոֆեսորներ Երվանդ Թերզյանը եւ Ռիչարդ Լովելասը, Վիկտոր Համբարձումյանի անվ. միջազգային մրցանակի 2010 թ. հաղթող Գարիկ Իսրայելյանը (Իսպանիա) եւ այս տարվա հաղթողներ Յան Էյնաստոն (Էստոնիա) եւ Իգոր Նովիկովը (Ռուսաստան), ֆրանսահայ աստղագետ Ժորժ Ալեսյանը, իտալացի աստղագետ Կորին Ռոսին եւ այլք, ինչպես նաեւ ԲԱ աստղագետներ: Դասախոսություններից եւ գործնական պարապմունքներից բացի մասնակիցների համար կկազմակերպվեն դիտումներ եւ դրանց արդյունքների մշակում, ծանոթություն աստղադիտարանի աշխատանքներին եւ շրջագայություններ Հայաստանում:



**Հայկական աստղագիտական ընկերություն**



# ՏԻՄ ընտրությունների երկրորդ փուլը՝ սեպտեմբերի 23-ին

**Սեպտեմբերի 9-ի ՏԻՄ ընտրություններից պրծանք ու ճանապարհ ենք ընկնում սեպտեմբերի 23-ի ՏԻՄ ընտրություններ, որոնք տեղի կունենան Արագածոտնում, Վայոց ձորում, Տավուշում, Կոտայքում եւ Գեղարքունիքում, ընդհանուր հաշվով՝ 318 համայնքում: 262 համայնքում համայնքի ղեկավար կընտրեն, 281-ում՝ ավագանի: Պատկերացրեք՝ հարկավոր թվով թեկնածուների բացակայության պատճառով 13 համայնքում ընտրություններ չեն կայանա: 16 քաղաքում քաղաքապետի ընտրություններ են (ընդ որում՝ Աբովյանում, Սեւանում, Ճամբարակում եւ Եղվարդում անմրցակից, մեկական թեկնածուներ են մնացել): Այս եւ հարակից այլ տեղեկություններ երեկ կարելի էր ստանալ ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանից, որը հանդիպելով լրագրողների հետ, նաեւ անդրադարձավ սեպտեմբերի 9-ին տեղի ունեցած ընտրություններին:**

**Ինքնաբացարկներից հետո սեպտեմբերի 23-ին 521 գրանցված թեկնածու կպայքարի 262 համայնքում համայնքապետ, 2626-ը՝ ավագանու անդամ դառնալու համար:**

**Միշտ հետաքրքրական է ընտրությունների մասնակիցների կուսակցական պատկանելությունը. գրանցված 3149 թեկնածուներից 1702-ն անկուսակցական են, 5-ը՝ «Ժառանգությունից», 856-ը՝ ՀՀԿ-ից (որոնցից 241-ը պայքարելու համայնքի ղեկավար, 612-ը՝ ավագանու անդամ դառնալու համար): ՕԵԿ-ից գրանցված է 47 թեկնածու (6-ը՝ համայնքի ղեկավարի, 41-ը ավագանու անդամի տեղերին է հավակնում), ՀՀՇ-ն 5 գրանցված թեկնածու ունի, ՀՅԴ-ի 86 գրանցված թեկնածուից 21-ը պայքարելու է համայնքի ղեկավար, 65-ը՝ ավագանու անդամ դառնալու համար: ԲՀԿ-ի ներկայացրած թեկնածուներից գրանցվել են 424-ը (69 պայքարելու է ավագանու անդամի, 355-ը՝ ավագանու անդամի տեղի համար), ՌԱԿ-ի 3 ներկայացուցիչ հավակնում է ավագանու անդամ դառնալ:**

**510 տղամարդ եւ 11 կին պայքարելու են համայնքի ղեկավարի, 2462 տղամարդ եւ 164 կին ավագանու անդամի համար: Համայնքապետի թեկնածուներից 161-ը մինչեւ 40 տարեկան են, 482-ը՝ 40-60: Ավագանու անդամներից 1251-ը մինչեւ 40 տարեկան են, մնացածների տարիքն ավելի բարձր է:**

**Սեպտեմբերի 23-ի ՏԻՄ ընտրություններին կհետեւի 100-ից ավելի դիտորդ հասարակական կազմակերպություններից, ընդ որում՝ դիտորդի իրավունք ստացել են բոլոր դիմողները:**

**Թարմացնենք նաեւ սեպտեմբերի 9-ին տեղի ունեցած ընտրություններին վերաբերյալ տեղեկությունները՝ 379 համայնքում կայացած ընտրություններում համայնքի ղեկավարի տեղի համար պայքարող 716 առաջադրվածներից ընտրվել է 379, ավագանու անդամի տեղի համար 4073 առաջադրվածներից՝ 2905-ը: 84 համայնքի ղեկավար (կամ 22 տոկոսը) են դարձել նոր մարդիկ, ընդ որում այդ 84 համայնքներից 43-ում նախկին համայնքապետներն առաջադրվել էին:**

**Սեպտեմբերի 9-ի ընտրությունների կուսակցական պատկերն այսպիսին է՝ ընտրված համայնքի ղեկավարներից ՀՀԿ-ական են 238-ը, ԲՀԿ-ական՝ 21-ը, ՀՅԴ-ական՝ 16-ը, ՕԵԿ-ական՝ 9, իսկ 95-ն անկուսակցական են: Ավագանու անդամ են 759 ՀՀԿ-ական, 158 ԲՀԿ-ական, 35 ՕԵԿ-ական, 44 ՀՅԴ-ական, 2 «Ժառանգությունից» եւ 2 ՌԱԿ-ական: Սեպտեմբերի 9-ի ընտրություններում հաղթողներից ամենատարեց համայնքապետը Լոռու Դսեղ գյուղինն է՝ Նորիկ Քոչարյան, 77 տարեկան, նա անկուսակցական է, իսկ ամենաերիտասարդը Շիրակի մարզի Սարիգյուղի ՀՀԿ-ական համայնքապետն է՝ 27 տարեկան:**

**Ս. Խ.**

# Ադրբեջանական «իրավագիտակցություն»

*1-ին էջից*

**Ընդսմին, Հունգարիան առաջնորդվել է կոնվեցիայի տրամաբանությամբ, ըստ որի պատիժ սահմանող երկիրը պետք է նախապես տեղեկացվի, թե արտահանձնվող դատապարտյալը իր հայրենիքում ենթարկվելո՞ւ է հավելյալ դատական պրոցեդուրայի, թե՞ ուժի մեջ է մնալու սահմանված պատիժը: Խոսքն այն մասին է, որ Սաֆարովը հունգարական արդարադատության կողմից ցմահ ազատազրկման է դատապարտվել՝ 30 տարի պայմանական վաղաժամկետ ազատվելու իրավունք չունենալով:**

**Այսինքն, հունգարական կողմը հետաքրքրվել է՝ Սաֆարովի հանդեպ կայացրած վճիռը դատական կարգով վերանայվելո՞ւ է, թե՞ ոչ, ինչին Ադրբեջանի արդարադատության նախարարությունը բացասական պատասխան է տվել: Կոնվենցիայի տրամաբանությամբ, սա նշանակում է, որ Ադրբեջանը հավաստիացրել է, որ հունգարական դատարանի վճիռը վերանայելու եւ Սաֆարովի հանդեպ նոր դատական պրոցեդուրա սկսելու անհրաժեշտություն չի լինի:**

**Իլհամալիեւյան աշխատակազմի «իրավագետ»-պատասխանատուն հենց այս վերջին ձեւակերպումն է «հիմք» համարում, որ «Սաֆարովին ներում շնորհելը լիովին օրինական է»: Այսինքն, նա կարծում է, որ հունգարական կողմը Սաֆարովի նկատմամբ լրացուցիչ դատական պրոցեդուրա չսկսելու մասին Ադրբեջանի արդարադատության նախարարության պատասխանը պետք է հասկանար այնպես, որ Բաքվում էքստրադիցիայի ենթարկվածի հանդեպ ընդունվելու է «արտադատական որոշում»:**

**Ի՞նչ «պայծառատես իրավագիտակցություն» ունի իլհամալիեւյան չինովնիկը: Ստացվում է, որ երկրի օրենսդրությամբ ցմահ ազատազրկման դատապարտվածը մասնակի կամ լրիվ ներման խնդրագիր կարող է ներկայացնել միայն 25-ամյա պատժաժամկետը կրելուց հետո, իսկ նույն երկրի նախագահը, որ սահմանադրության եւ օրինականության երաշխավորն է, «կարող է կոնկրետ դեպքում ընդունել արտադատական որոշում»: Ի՞նչ կարող ես անել նման «իրավագիտակցության» հետ: Երեւի մի բան միայն. ընդունել իրողությունը՝ որ Ադրբեջանում ոչինչ տրամաբանության եւ մարդկային պարկեշտության ենթակա չէ:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի Տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

ԱԶԳ

## Անցուդարձ

# Ինչպե՞ս բարձրացնել նվազագույն աշխատավարձը

## *Հրանտ Բագրատյանի առաջարկն ու կառավարության եզրակացությունը*

Հայաստանում նվազագույն աշխատավարձը բարձրացնելու օրենսդրական առաջարկ է ներկայացրել նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը՝ ներկայիս 32500 դրամից առաջարկելով դարձնել 72500 դրամ: Նախ հարկ ենք համարում հիշեցնել, որ Բագրատյանի վարչապետության տարիներին Հայաստանում նվազագույն աշխատավարձ հասկացություն փաստորեն գոյություն չուներ, քանի որ քչերն էին աշխատավարձ ստանում: Աշխատավարձն էլ մեծ վերապահումներով կարելի էր աշխատավարձ համարել, նկատի ունենալով նրա չնչին լինելը, իսկ ստանալն էլ շատ հարաբերական հասկացություն էր, քանի որ այդ չնչին աշխատավարձերն ու նաեւ թոշակները այդ ժամանակ ուշանում էին ամիսներով, դառնալով տարիներ: Սա՝ իմիջիայլոց:

Ի՞նչ է Հրանտ Բագրատյանի առաջարկի վերաբերյալ ասում կառավարությունը, որի եզրակացությունը պետք է ներկայացվի Ազգային ժողով: Կառավարության եզրակացության մեջ նշվում է, որ նվազագույն աշխատավարձի բարձրացումը համահունչ է Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությանը, եւ նրա ծրագրով 2012-2017 թվականների ընթացքում նախատեսվում է «նվազագույն աշխատավարձի մակարդակի առնվազն կրկնապատկում, նվազագույն աշխատավարձ/աղքատության գիծ ցուցանիշի առնվազն 140 տոկոս մակարդակի ապահովում»: Ավելին, նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացում նախատեսված է ինչպես Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով, այնպես էլ 2013 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծով: Չի նշվում սակայն, թե որքանով է նախատեսում կառավարությունը բարձրացնել նվազագույն աշխատավարձը եկող տարի:

Միաժամանակ, ըստ կառավարության, լրացուցիչ հիմնավորման կարիք ունի Հրանտ Բագրատյանի այն բացատրությունը, որ այս նախագիծը չի առաջացնում բյուջետային ծախսեր: Երբ նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ միաժամանակ համամասնորեն բարձրացվեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրվող բոլոր աշխատավարձերը եւ նվազագույն աշխատավարձի հետ կապված այլ ծախսերը, ապա, կառավարության հաշվարկներով, լրացուցիչ կպահանջվի մոտ 360 մլրդ դրամ: Իսկ երբ բարձրացվի միայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրվող մինչեւ 72500 դրամ ամսական աշխատավարձ ստացող աշխատողների աշխատավարձերը, ապա՝ 28,4 մլրդ դրամ:

Այս դեպքում, ըստ կառավարության, խախտվում է նաեւ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված արդարացի վարձատրության իրավունքի սկզբունքը, չի ապահովվում աշխատավարձի կախվածությունը աշխատանքի քանակից եւ որակից, կազմակերպության գործունեության արդյունքներից եւ աշխատանքի շուկայում աշխատանքի պահանջարկից, ինչպես նաեւ անտեսվում են «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» օրենքի պահանջները:

Կառավարությունը համաձայն չէ Բագրատյանի այն պնդմանը, որ այս նախագիծը «շեշտակիորեն կպակասեցնի ստվերային տնտեսությունը»: Ավելին, կառավարության եզրակացության մեջ նշվում է, որ նվազագույն ամսական աշխատավարձի ավելացման պայմաններում գործատուները, որոնք ցածր որակավորում ունեցող անձանց կողմից իրականացվող, մասնագիտական գիտելիքներ ու պատրաստվածություն չպահանջող աշխատանքների համար ներկայումս 72500 դրամից պակաս աշխատավարձ են վճարում իրենց վարձու աշխատողներին, ավելի շատ հակված կլինեն նշյալ վարձու աշխատողներին չգրանցելու:

Ելնելով շարադրվածից՝ կառավարությունը այն եզրակացությանն է եկել, որ օրենքի նախագծով առաջարկվող նվազագույն աշխատավարձի մեծությունը եւ կիրարկման ժամկետը լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Կոռուպցիոն ռիսկերի նվազեցո՞ւմ

Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը երեկ լրագրողների հետ հանդիպմանը ներկայացրեց հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման ընթացքը եւ Հայաստանի կրթական համակարգը գլոբալ մրցունակության զեկույցում:

Հակակոռուպցիոն երկամյա ծրագիրը իրականացվել է 75 տոկոսով, որի ամբողջական կատարմանը մնացել է եւս 3 ամիս, տեղեկացրեց ԿԳ նախարարը եւ ավելացրեց, որ 2010 թ. ստեղծված հակակոռուպցիոն ծրագիրը շատ գործնական եւ առարկայական է, որտեղ մատնանշված են կոնկրետ թիրախներ, խնդիրներ. «Այս երկու տարիների ընթացքում հաջողվել է մասնագիտական կրթության հաստատություններում վերացնել ընդունելության քննությունները, մեծ թվով երիտասարդներ սկսել են ընտրել մասնագիտական կրթության այդ տարբերակը, ինչպես նաեւ կտրուկ նվազել են կոռուպցիոն ռիսկերը: Սակայն հարցազրույցով ընդունելությունը պահպանվել է միայն նեղ մասնագիտություններով՝ առողջապահական եւ արվեստի ոլորտներում: Մնացյալ տեղերում դիմորդը ատեստատի միջին բալով կարող է մասնակցել մրցույթին՝ առանց լրացուցիչ քննության»:

Երկրորդ խոշոր փոփոխությունը հակակոռուպցիոն բնույթի՝ միասնական քննությունների անցումը շտեմարանային համակարգի, ըստ որի ունեցանք կանխատեսելի քննություններ: ԿԳ նախարարը նշեց, որ մյուս տարվանից միասնական քննության բոլոր առարկաների թեստերը կկազմակերպվեն շտեմարանային համակարգով:

ԿԳ նախարարության երրորդ հաջողությունը վերաբերում է բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեությանը, մի շարք լրջագույն փոփոխություններով՝ նպատակ ունենալով վերացնել կամ նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, որոնք առկա էին նախկին ընթացակարգերում:

Հասկանալի է, որ պետական քննությունների ընթացակարգը փոխելու շնորհիվ ԿԳ նախարարությանը հաջողվեց կտրուկ նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը այդ շրջանակում: Մասնավորապես՝ ուսանողներին իրավունք տրվեց բողոքարկելու պետական քննության արդյունքները, եւ քննության ողջ ընթացքը ձայնագրվեց, ինչը բողոքարկումների ժամանակ հիմք էր համապատասխան գործընթաց սկսելու համար:

ԿԳ նախարար Ա. Աշոտյանը, անդրադառնալով դպրոցներում կոռուպցիոն ռիսկերին, ասաց. «Սոցիոլոգիական բոլոր հետազոտությունները ցույց են տալիս, որ դպրոցներում՝ որպես կոռուպցիոն դրսեւորումներ, դիտվում են ծնողական խորհուրդների միջոցով կազմակերպվող դրամահավաքները, որոնք իրականում մենք չենք դիտարկում կոռուպցիա, քանի որ ճնշող մեծամասնությունը ուղղված է դպրոցին աջակցելու, որոշ խնդիրներ լուծելու գործընթացին: Կոռուպցիոն են դիտարկվում այն դրամահավաքները, որոնք միտված են տնօրենի, դասղեկի կամ ուսուցչի անձնական շահադիտական նպատակներով նյութական միջոցներ ստանալուն»: Ինչ վերաբերում է մրցութային կարգով ուսուցիչների ընդունմանը՝ ԿԳ նախարարն ասաց, որ այն գործում է արդեն 1,5 տարի, որի ընթացքում կարգը բախվել է մի շարք մարդկանց դիմադրությունների:

Ըստ Աշոտյանի, նախարարությունը հանրության շրջանում համարվում է կրթության ոլորտի միակ պատասխանատու: Սակայն ԿԳՆ-ն այսօրվա օրենսդրությամբ պատասխանատու է համահանրապետական մակարդակով կրթական քաղաքականության մշակման համար, իսկ հանրակրթական դպրոցների շուրջ 94 տոկոսը գերատեսչական ենթակայության մեխանիզմներով կապված են ոչ թե կրթության նախարարության, այլ մարզպետարանների հետ:

Անդրադառնալով սիրիահայ երեխաներին՝ բանախոսը նշեց, որ դպրոցներին հանձնարարվել է սիրիահայերի համար կազմակերպել արեւելահայերենի լրացուցիչ դասընթացներ, ստեղծել բարենպաստ պայմաններ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

### ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՅՍՕՐՎԱ ՆԻՍՏՈՒՄ

# Ի՞նչն է փոխվելու վարորդական իրավունքի վկայականի տրամադրման կարգում

**Այսօր կառավարության նիստում քննարկման է դրվելու վարորդական իրավունքի վկայական ստանալու կարգում փոփոխություններ կատարելու որոշման նախագիծը:**

**Ներկայումս գործող կարգով վարորդական վկայական ունեցող անձը որեւէ նոր կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու համար հանձնում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական քննություն, չնայած տեսական քննության հարցաշարը նույնն է բոլոր կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ստանալու քննությունների համար: Հաջորդը՝ որակավորման քննությունների ընդհանուր արդյունքների հիման վրա, քննական մարմնի ղեկավարի կողմից ընդունվում է անձին վարորդական վկայական տալու կամ վարորդական վկայական տալը մերժելու որոշում: Քննական մարմնի ղեկավարի կողմից գրավոր որոշում է ընդունվում նաեւ վարորդական վկայականի փոխանակման, կորցրած վարորդական վկայականի կրկնօրինակը տրամադրելու դեպքում:**

**Ինչ վերաբերում է ավտոմոբիլով գործնական քննությանը, ապա այժմ անցկացվում է երկու փուլով: Առաջին փուլ՝ գործնական վարում ավտոդրոմում կամ ավտոհրապարակում, երկրորդ փուլ՝ գործնական վարում ճանապարհային երթեւեկության իրական պայմաններում:**



**Բացի վերոնշյալից՝ որակավորման քննություններին մասնակցելուց առաջ քաղաքացու տվյալները համեմատվում են հոգեբուժական բժշկական հաստատությունների տված տվյալների հետ, եւ եթե առկա է համընկնում, ապա արգելվում է մասնակցել քննություններին:**

**Կառավարության այսօրվա որոշման նախագծի համաձայն՝ քաղաքացին այլեւս չի ներկայացնելու գրավոր դիմում եւ պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո անմիջապես նկարահանվելու է համակարգչային տեխնիկայի միջոցով, ինչով փաստվելու է նրա դիմելը քննական մարմին:**

**Վարորդական վկայական ունեցող անձը որեւէ նոր կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու համար այլեւս չի հանձնելու տեսական քննությունը:**

**Հաջորդը՝ որակավորման քննությունները դրական հանձնելուց հետո, վարորդական իրավունքի վկայական հատկացնելիս կամ վարորդական վկայականը փոխանակելիս, կորած վարորդական վկայականի կրկնօրինակը տրամադրելիս քննական մարմնի ղեկավարի կողմից գրավոր որոշում չի ընդունվելու, այլ վարորդական վկայականը կատարելու է վարչական ակտի դեր: Գրավոր որոշում ընդունվելու է միայն վարորդական վկայական տալը, փոխանակելը, կորած վկայականի կրկնօրինակ տալը մերժելու դեպքում:**

**Նախատեսվում է նաեւ գործնական քննությունն անցկացնել մեկ փուլով՝ միայն ավտոդրոմում (ավտոհրապարակում), իսկ մինչեւ Ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական ստորաբաժանումները որակավորման գործնական քննությունների ընդունման համար նախատեսված ավտոդրոմներով (ավտոհրապարակներով) ապահովելը՝ ճանապարհային երթեւեկության իրական պայմաններում:**

**Նոր նախագծով վարորդական վկայական ստանալու համար պարտադիր ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկից հանվել է դիմում, ինչպես նաեւ տեսական քննության արդյունքների վերաբերյալ փաստաթուղթ ներկայացնելու պահանջը, քանի որ տեսական քննության արդյունքները էլեկտրոնային եղանակով հասանելի են լինելու գործնական քննություն ընդունող ծառայողին: Բացի դրանից, հանվում է նաեւ քաղաքացու տվյալները հոգեբուժական բժշկական հաստատությունների տված տվյալների հետ համեմատելու պահանջը եւ փոխարենը ներդրվում տեսական քննության հետ միաժամանակ հոգեբանական թեստ հանձնելու պահանջ:**

**Այսպիսով, փաստորեն կվերանան քաղաքացու գրավոր դիմում ներկայացնելու, գործնական քննությունը երկու փուլով անցկացնելու, քննական մարմնի ղեկավարի գրավոր որոշում կայացնելու եւ քաղաքացու տվյալները հոգեբուժական բժշկական հաստատությունների տված տվյալների հետ համեմատելու գործընթացները, պարզեցնելով եւ թափանցիկ դարձնելով վարորդական իրավունքի վկայական ստանալը:**

Ա. Ս.

# Տեսախցիկների եւ արագաչափ սարքերի տեղադրումը Երեւանում շարունակվում է

**Ճանապարհային ոստիկանությունը տեղեկացնում է, որ շարունակվում են Երեւան քաղաքում երթեւեկության նկատմամբ վերահսկողության եւ իրավախախտումների արձանագրման տեսախցիկների եւ արագաչափ սարքերի տեղադրման աշխատանքները:**

**2012 թվականի սեպտեմբերի 25-ից գործարկվելու են նաեւ Երեւան քաղաքում նոր տեղադրված երթեւեկության արագության վերահսկողության արագաչափ սարքերը, որոնք տեղակայված են Սիլիկյան, Պարույր Սեւակի, Ռուբինյանց եւ Դավիթ-Բեկի փողոցներում:**

**Ճանապարհային ոստիկանությունը կրկին հորդորում է վարորդներին պահպանել ճանապարհային երթեւեկության կանոնները:**

*Ճանապարհային ոստիկանություն*

# Օրինակելի երկիր

*1-ին էջից*

Ո՞րն է առաջադեմ պետություն կառուցելու սինգապուրյան բանալին. «Լին ու նրա կողմնակիցները ցանկանում էին Սինգապուրը դարձնել ժամանակակից պետություն, մի պետություն, որը պետք է հիմնական նպատակը համարեր բնակչության տնտեսական զարգացումը, ինչպես նաեւ հասարակական դիրքի եւ հնարավորությունների հավասարություն ապահովելը՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից, անկախ ռասայից»:

«Դա մի փոքրիկ ու խղճուկ շուկա է Ասիայի խաղաղ մի անկյունում», Սինգապուրի մասին համընդհանուր այս կարծիքի տիրապետության մեջ «տնտեսական բարգավաճում եւ սոցիալական ներդաշնակություն ապահովելու համար Լին որոշեց կիրառել խստագույն ու ծայրահեղ միջոցներ: Անհրաժեշտ էր ստեղծել մի այնպի-

մար են նկատվում հենց միջինները-Մ. Բ.):

«Լին եւ նրա կուսակիցները համոզված էին, որ Սինգապուրի գոյությունը բացառապես կախված է նրա քաղաքացիների պատրաստակամությունից եւ կարողություններից, իսկ որպեսզի քաղաքացիները ունենան համապատասխան կեցվածք ու մոտեցում, անհրաժեշտ է կերտել մարդու նոր տեսակ»:

Ինչպե՞ս եւ ինչո՞վ էր ուղղորդվում Սինգապուրի վարչապետը: «Այդ հենակետը եղավ չինական մշակույթն ու արժեհամակարգը: Նա առաջինն էր, որ 20-րդ դարում կյանքի կոչեց հնագույն չինացի փիլիսոփա Կոնֆուցիոսին եւ նրա ուսմունքն օգտագործեց իր քաղաքական նպատակներն իրագործելու համար: Կոնֆուցիոսն, ով լավ պետություն ունենալը համարում էր հիմնահարց, ասում էր, որ պետության որակն ապահովող ամե-

պես լծվել էին իրենց երկրների շինարարության գործին՝ նա երբեք չկոռումպացվեց: Երբ Լին իշխանությունից հեռացավ, Սինգապուրում մեկ շնչին ընկնող ազգային համախառն արտադրանքը կազմում էր 14 հազար դոլար (այժմ՝ 22 հազար): Եվ հենց սա է պատճառը Սինգապուրում ստեղծված այն համակարգի, որ այնքան կայուն ու վստահելի է եւ կարող է գոհացնել անգամ ամենակասկածամիտ ու քմահաճ ներդնողին:

Նա անդադար սովորեցնում եւ հուշում էր բոլորին, որ արդյունաբերական այս դարում, նոր համակարգը տեղ է նախապատրաստում միայն նրանց համար, ովքեր իրենց հույսը կապում են գիտելիքներ ձեռք բերելու հետ: «Մենք պետք է կրթվենք եւ լինենք գիտելիքի վրա հիմնված աշխարհի մի մասը:

Մենք դեպի առաջ նայող հասարակություն ենք, այլ ոչ թե հետ նայող: Մարդն այսօր փորձում է հաս-

տարձան, ֆինանսավորում տրամադրի, որ վերականգնվի կառույցը: Սակայն ինչ կարեւորություն ունեն եկեղեցին, հյուրանոցը կամ փողոցը, եթե հայություն չկա: Մեզ համար ամենացավոտ խնդիրը շարունակում է մնալ հայության արտագաղթը իր երկրից»:

Նա այն կարծիքին է, որ սփյուռքահայությունը, չնայած նոր զարթոնք է ապրում, շնորհիվ Հայաստանից արտագաղթածների, սակայն դա ժամանակավոր բնույթ է կրում: «Սփյուռքը կանգնած է ձուլման վտանգի առաջ: Դա կանխելը շատ դժվար է: Նախկին պայմանները չկան այլեւս, երբ նվիրյալներ կային, հայրենիքի բաղձանքը, հայրենադարձության ոգեւորությունը կային: Հիմա պատկերը այլ է. հայկական հիմնական գաղթօջախը՝ Լիբանանից Միացյալ Նահանգներ տեղափոխված, որքան էլ՝ այսօր ծաղկուն եւ բավական արթուն, թվում է՝ երկրորդ Հա-

կում: Մենք իհարկե պետք է ելնենք մեր ժողովրդի բնույթից. չինացիները սիրում են հետեւել առաջնորդին, խոսք լսել, մենք չենք սիրում: Մենք սիրում ենք լինել ինդիվիդուալ: Այդ երկրում ապրում են ամենատարբեր կրոնների ու ազգությունների մարդիկ: Հնարավոր էր, որ փորձը տապալվեր, քաոսի վերածվեր երկիրը, սակայն շնորհիվ Լի Քուան Յուի մարդկային բարձր հատկանիշների եւ ղեկավարի հմտությունների եւ իր համախոհների նվիրվածության, հնարավոր դարձավ կայացնել երկիրը, գաղափարապես պատրաստել մարդկանց. հաշվարկը այնպիսի օրենքներն էին, որոնք նպաստեին, որ քաղաքացին լինի ազնիվ, կիրթ, բարոյապես օրինակելի:

Այսօր Սինգապուրը ամենաապահով քաղաքներից է. մտնում ես shoping-կենտրոն, պայուսակդ կարող ես հանգիստ դնել մի կողմ եւ գնումներ կատարել: Մեկը չի դիպչի,

# Առաջատար պետության՝ Սինգապուրի փորձը

***Հոդվածի յուրաքանչյուր հայ ընթերցող դժվար թե չփորձի մտովի զուգահեռ անցկացնել սեփական երկրի հետ, որը հետխորհրդային այս 20 տարիների ձեռք բերած անկախության հետ այնպես է վարվում, ինչպես ինքնուրույն կյանքին անպատրաստ անհաս մի երեխա: Ակնհայտ է հոդվածի շարժառիթը եւ նպատակը. հոդվածագիրը նյութը շարադրելիս անպայմանորեն ի մտի ունեցել է իր երկիրը՝ Հայաստանը, նրա ներկա վիճակի ու ապագայի մտահոգությունները: Սինգապուրի փորձը՝ երկիրը վերականգնելու, կառուցելու գաղափարախոսությունն ու կոնցեպցիան, դիտարկվում է որպես լավագույն օրինակ, քանի որ հիմքում համամարդկային սկզբունքներն ու բարոյական նորմերն են ընկած: Սինգապուրի օրինակը ճանաչելու մեր անհրաժեշտությունը կարծում եմ նաեւ այն է, որ դա կարող է ամենածայրահեղ հոռետեսին իսկ հույս ներշնչել:***

***Մարո Մադոյան-Ալաջաջյանը այս հոդվածաշարում ներկայացրել է առաջնային այն սկզբունքները, որոնք իրականացնելու ճանապարհով է հնարավոր դարձել սինգապուրյան հրաշքը: Եթե փորձենք մեկ բառով ընդհանրացնել, ապա դա յուրաքանչյուր ազնիվ քաղաքացու՝ ճշմարիտ երկիր ու հասարակություն ունենալու երազանքն է: Թերեւս այն, ինչ մեզնից ոմանք փայփայում էին 1988-ից ի վեր, ազատություն հրապարակներում, որից հիմա անորոշ ու անգույն ծվեններ են մնացել, իսկ իրականում՝ հայկական գավառական մտածողության այն խեղճությունը, ինչ կա այսօր:***

***Այնուամենայնիվ, որքան էլ մեր թերահավատությանը, թե մեզանում երբեւէ հնարավոր է տեղայնացնել Սինգապուրի քաղաքական փորձը, քաղվածաբար ներկայացնենք այն գլխավորը, ինչ կարեւորել ենք, ըստ վերոհիշյալ հոդվածաշարի:***



սի հասարակություն, որն աշխատասիրությամբ ու եռանդով կարողանար դիմագրավել բոլոր հավանական խոչընդոտները: Նա իր ծրագրերում ընդգրկեց պատասխանատվություն ունեցող բոլոր անձանց, արհեստակցական միությունների ղեկավարներին, թերթերի խմբագիրներին, կրոնական առաջնորդներին, չինական մշակույթի հաստատությունների ղեկավարներին, ովքեր պետք է հասարակության հետ աշխատեին եւ ձեռնարկեին հարկ եղած միջոցները՝ համոզել, հրապուրել, երբեմն ստիպել, ճնշում գործադրել, անել ամեն ինչ, որպեսզի հանրությունը փոխգործակցեր կառավարության որոշումների հետ: Սինգապուրը արդյունաբերական քաղաք դարձնելու համար պահանջվում էր մի կողմ թողնել անձնական շահերը եւ մտածել ընդհանուրի մասին:

«Հաջողությունը հիմնականում պայմանավորված է այն մարդկանց որակով, ովքեր պատասխանատու պաշտոններում էին», համոզված էր Լին. նա անհատի արժանիքներն ավելի էր կարեւորում, քան երկրում գործող կառավարման համակարգը: Նա պնդում էր, որքան էլ համակարգը կատարյալ լինի, չի կարող նույն արդյունքը տալ բոլոր հասարակություններում, քանի որ տաղանդը եւ մարդկային արժանիքները բոլոր հասարակություններում նույնը չեն: Նա բարձր հասարակությանը հավատացողի իր սկզբունքը բացատրում էր՝ ասելով, որ ինքը մշտապես զբաղված է այն խնդրով, թե ինչ են անելու հանճարեղ եւ միջինից բարձր ընդունակությունների տեր անհատները, քանզի նրանք են, որ վերջին հաշվով որոշելու են գալիքը. «Միջինից բարձրն է, որ ուղղություն է տալիս հասարակության ընթացքին» ( մեզանում այսօր ճիշտ հակառակն է՝ ամեն բնագավառում առաջ են մղվում, հար-

նագլխավոր պայմանը ղեկավարների եւ նրա խորհրդատուների արժանիքներն են: Մարդու կատարյալ տեսակը, նրա տերմինով, «junzi»-ն էր, այսինքն՝ ջենտլմենը, այն անհատը, որն ունի առաքինություն, բարեկիրթ է, շնորհալի, վստահելի, արժանահավատ եւ վաստակաշատ: Լին բոլոր պետական ծառայողներից առանց բացառության հենց այս որակներն էր ակնկալում: Նա կադրերի ընտրությանն ավելի լուրջ էր մոտենում, քան որեւէ այլ երեւույթի:

Սինգապուրի իրական կերտողը, նրա քաղաքացիների կյանքը ձեւավորողն ու իմաստավորողը, առաջին հերթին նրա կրթական համակարգն է:

Լին, լինելով հասարակություն կերտող ճարտարագետ, կարողացավ տեսնել ու հասկանալ, թե ժողովրդի համար որքան կարեւոր է սեփական մշակույթն ու լեզուն պահպանելը: «Ես մարդկանց չեմ ասում անել այն, ինչը ես չեմ անում, ասում էր նա, ես իմ երեխաներին ուղարկել եմ չինական դպրոց, որտեղ նրանք սովորել են փիլիսոփայական եւ մշակութային մի ողջ համակարգ»: Նա կենտրոնական դեր հատկացրեց չինական մշակույթին ու լեզվին՝ կազմակերպելով «Ասիական արժեհամակարգի» արշավներ, որոնցում հետեւում էր Կոնֆուցիոսի սկզբունքներին:

Այս գաղափարներով զինված, նա կարողացավ շատ դժվարին պայմաններում ստեղծել քաղաքական ու պետական մի մարմին, որտեղ ծառայող անձինք ունեին համապատասխան կրթություն, աշխատանքային պահանջված հմտություններ, մարդկային անբասիր բնութագիր եւ բառացիորեն զերծ էին կոռումպացված լինելուց:

Լի Քուան Յուն իրականում մի բանով էր տարբերվում Ասիայի մյուս ղեկավարներից, ովքեր նրա

նել աստղերին... Դա ցույց է տալիս, որ մենք մեր խնդիրների լուծումը չպետք է փնտրենք ինչ-որ հինավուրց ժամանակների պատմագրության փոշոտ էջերը շուռ տալով, որը մեզ պատմում է ինչ-որ հնաոճ սովորույթների մասին, որոնք այդ օրերի համար պատշաճ են եղել: Սակայն մենք ունենք առաջ նայող, հետազոտող հայացք, ձգտում ենք սովորել, ձգտում ենք ապագայից մեզ համար հաջողություն ստեղծել»:

## Հայաստանի եւ հայության մտահոգություններով

Ահա այսպիսի մի երկրում ապրում են նաեւ հայեր եւ, բնականաբար, ենթարկվում տեղի օրենքներին, համակարգին: Հայերն այստեղ ապրում են դեռեւս 19-րդ դարի սկզբից: 1821-ին Սարգիս եւ Ներսես եղբայրները Մալակկայից եկան եւ հիմնեցին մի ձեռնարկություն: Նրանց շուրջը հավաքված հայկական համայնքը Սինգապուրի կառավարությունից իրենց տրամադրած հողակտորի վրա 1835 թ.-ին քաղաքի կենտրոնում կառուցեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին, որը Սինգապուրում քրիստոնեական առաջին եւ ամենահին եկեղեցին է: Առաջին շքեղ հյուրանոցները նույնպես կառուցեցին այս երկու եղբայրները:

«Կարո՞ղ եք մտածել, անակնկալ հարցնում է զրուցակիցս, որ հայերն ուզենան ձուլվել մալայացիների կամ չինացիների հետ»: «Հազիվ թե», ասում եմ: «Բայց ձուլվել են,- շարունակում է նա, նրանց մեջ հայկական գրեթե ոչինչ չէր մնացել: Հայաստանից վերջին տարիներին գնացողները աշխուժացրին համայնքը. հոգեւորական են Ավստրալիայից հրավիրում, որ պատարագ մատուցի, պահանջեցին, որ պետությունը ճանաչի եկեղեցին որպես պատմական հու-

շարձան է, սակայն շատ կարճ կյանք է ունենալու: ԱՄՆ-ում սա առաջին սփյուռքը չէ, այս էլ երրորդ սփյուռքն է. առաջինները ձուլվեցին: Բազմաթիվ մարդկանց եմ ճանաչում, ովքեր գիտեն, որ ծնողները հայ են, բայց միայն՝ այդքանը: Իրենք կապ չունեն հայության հետ: Այն կարծիքը, թե մի օր արթնանում է հայությունն իրենց մեջ, դատարկ խոսքեր են: Մի անգամ որ ձուլվեցին, այլեւս փրկություն չկա: Նոր եկածները, որ ավյուն են տալիս, հավաքույթներ եւ այլն են կազմակերպում, ժամանակավոր բնույթ է կրում. երկու սերունդ հետո նրանք էլ կուլ կգնան, ամերիկյան մսաղացը շատ արագ է կուլ տալիս»:

«Իսկ Եվրոպայո՞ւմ»,- հարցնում եմ: «Այստեղ՝ ավելի արագ, դիսկրիմինացիան ավելի շատ է: Այնպես որ, սփյուռքահայության համար ամենաէականը Հայաստանի ամուր պետության կայացումն է»: «Ուզում եք Սինգապուրի օրինակով ներշնչե՞լ մեզ»: «Ես չէի անդրադառնա այդ երկրին, եթե այս պատմության մեջ չլիներ հույս ներշնչող ուժը, որ ճիշտ ռազմավարություն մշակելով եւ քաղաքականություն վարելով կարելի է ամենակործանվող երկիրն անգամ փրկել եւ դարձնել առաջնային: ԽՍՀՄ փլուզվելուց հետո նախկին գիտաարդյունաբերական ծաղկուն Հայաստանը ամլացման շրջան է ապրում, երրորդ կարգի երկրների շարքում է: Այս հոդվածով փորձել եմ հուշել՝ ինչն է խանգարում երկրին ոտքի կանգնել: Խոսքը սինգապուրյան փորձը տառացիորեն ընդօրինակելու մասին չէ, այլ վերցնելու այն ռացիոնալը, ինչը հնարավոր է ներդնել մեր երկրում»:

«Այս երկու ժողովուրդները միանգամայն տարբեր պատմություն, ճակատագիր ու նկարագիր ունեն, հնարավո՞ր է դա»: «Յուրաքանչյուրը դեղատոմսը ինքն է մշա-

որովհետեւ սասափելի պատիժ է գործում: Ավստրալիայից մի երիտասարդ Սինգապուրի վրայով թմրադեղ տեղափոխելու համար մահապատժի ենթարկվեց՝ կախաղանի միջոցով: Օրենքը այդպես է: Երբ մուտք ես գործում այդ երկիր, նախապես ծանոթացնում են: Եվ ժողովուրդը համաձայն է այդպիսի օրենքներին ու որոշումներին, որովհետեւ ցանկացել է երկիրը կայանա»:

Հանգամանալի ուսումնասիրելով Սինգապուրի պատմությունը, անցած ճանապարհը, նաեւ ժամանակ առ ժամանակ ապրելով այս երկրում, մեր հայրենակցուհին եկել է այն համոզման, որ յուրաքանչյուր երկիր կարող է կայանալ միայն սեփական ազգային արժեհամակարգի վրա: «Մինչդեռ մենք մեր արժեհամակարգն անտեսել եւ հետեւում ենք այլոց: Մեր հազարամյա պատմությունն ու քրիստոնեական մշակույթը մոռանում եւ ո՞ւմ ենք հետեւում: Հայաստանից երգիչներ են ուղարկում Միացյալ Նահանգներ, եւ նրանք երգում են ամերիկյան ոճով. ո՞ր ամերիկահային է դա պետք:

Անգլիայում բարձր կրթություն ստացած Սինգապուրի վարչապետը եւ իր համախոհները վերցրեցին եվրոպական լավագույնը, բայց հիմնվեցին իրենց երկրի մշակութային արժեհամակարգի վրա: Վերադարձան արմատներին»:

Զրուցակիցս հիշատակում է Լի Քուան Յուի օգտագործած «էլիտ» բառը. հասարակության էլիտան այնտեղ համարվում էին ազնվական հատկանիշներով օժտված մարդիկ: «Այստեղ,- ասում է նա, այս բառն այնպես է խեղաթյուրված, ինչպես շատ հասկացություններ, արժեքներ ու մարդկային չափանիշներ»: Եվ համոզված է՝ Հայաստանը ոտքի կարող է կանգնել, երբ իշխանության գան ճիշտ այդպիսի մարդիկ՝ անկաշառ, ազնիվ, կրթված ու պատասխանատու:

# Բինգյոլի մոտակայքում PKK-ն ոչնչացրեց 10 զինծառայողի

## 2 օր առաջ նույն վայրում սպանվել էին նաեւ 8 թուրք ոստիկաններ

Օր չի լինում, որ PKK-ն զոհեր չպատճառի թուրքական զինված կամ անվտանգության ուժերին: Զոհերի թիվը հետզհետե աճում է: Զուգընթաց դրան՝ PKK-ն փորձում է բնակավայրեր գրավել, ինչպես օգոստոսին փորձել էր գրավել Շեմդինլին, Չուքուրջան ու Ջիզրեն, իսկ սեպտեմբերին՝ Բեյթուշեբափը: Թեեւ փորձերը ձախողվել են, բայց եւ այնպես PKK-ականները կարողացել են ներխուժել այս գավառներ, փողոցային մարտերում գրավել գավառապետարանի շենքը եւ թուրքականը շպրտելով բարձրացրել են իրենց կազմակերպության դրոշը:

Թուրքական զինված ուժերի ստորաբաժանումներին հաջողվել է այս գավառներում վերականգնել Թուրքիայի գերիշխանությունը համալրում ստանալուց հետո միայն: Թերեւս այս ամենի առումով պատահական չէր «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության ղեկավարների հայտարարությունը, թե Թուրքիայի Իրաքյան սահմանում 400 կմ հատվածը վերահսկում է PKK-ն: Ընդ որում, Թուրքիայի քրդաբնակ հարավարեւելյան եւ արեւելյան շրջանները ռազմականացված են, այնտեղ կա 100-հազարանոց զորք, որից 50 հազարը տեղաբաշխված է Սիրիայի ու Իրաքի սահմանի երկայնքով:

Ըստ երեւույթին PKK-ն մասնակի վերահսկում է նաեւ Թուրքիայի քրդաբնակ շրջանները: Դրանում համոզվելու համար նշենք, որ քրդական այս կազմակերպությունը երկրի հարավարեւելյան եւ արեւելյան շրջաններում թուրքական զինված ուժերի հետ մարտի մեջ մտնելուց, բնակավայրերը գրավելու փորձերից զատ, ճանապարհ է կտրում, ստուգում է ուղեւորների անձնագրերը եւ առեւանգում ինչպես պետական ու կուսակցական գործիչներին, այնպես էլ զինծառայողներին:

Որքան էլ վարչապետ Էրդողանը հերքի Թուրքիայի Իրաքյան սահմանի 400 կմ հատվածի վերահսկողության մասին «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության հայտարարությունը եւ PKK-ին համարի ահաբեկչական կազմակերպություն, անձնագրերի ստուգումներ անցկացնելու փաստն ինքնին երկրի քրդաբնակ շրջաններում PKK-ի վերահսկողության մասին է վկայում:

Թերեւս կարելի էր առեւանգումները ահաբեկչություն համարել, սակայն զինված ուժերի հետ մարտի բռնվելը, բնակավայրեր գրավելու փորձերը չեն կարող որեւէ առնչություն ունենալ ահաբեկչական գործունեության հետ: Ահաբեկիչների զոհը, որպես կանոն, ահաբեկչության հետեւանքով սպանված խաղաղ բնակչությունն է դառնում, այլ ոչ թե PKK-ի հետ մարտերում ոչնչացված կամ հարձակման թիրախ դարձած զինծառայողները: Միայն օգոստոսի 20-24-ին այս մարտերում, ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավոր Ումիթ Օրանի վկայությամբ, թուրքական զինված ուժերը 30 զոհ է տվել: Սեպտեմբերի 9-ին Շեմդինլիի մերձակայքում PKK-ականները ոչնչացրել էին 23 զինծառայողի: Սեպտեմբերի 18-ին Բինգյոլի շրջանում PKK-ն հրիթռակոծեց արձակուրդից զորամաս վերադարձող 200 զինծառայողի ավտոշարասյունը, որի հետեւանքով սպանվեց 10 զինծառայող, 71-ը վիրավորվեց, 5-ը՝ ծանր:

Հատկանշական է, որ միջադեպից 51 ժամ առաջ, կիրակի օրը, ինչպես երեկվա համարում գրել էր «Փոստա» թերթը, նույն վայրում PKK-ականների հրթիռակոծած միկրոավտոբուսում սպանվել էր ոստիկանության 8 աշխատակից: Հրթիռակոծման այս փաստերը ցույց են տալիս, որ թուրքական պետությունը երկրի քրդաբնակ հարավարեւելյան եւ արեւելյան շրջաններում նույնիսկ դժվարանում է ապահովել ոստիկանների ու զինծառայողների անվտանգությունը, անվտանգ տեղաշարժը: Ի դեպ, ահաբեկչություն չէ նաեւ զինծառայողների շարասյան հրթիռակոծությունը: Սա, ըստ ամենայնի, պարտիզանական կռիվների դրսեւորում է, այդ իսկ պատճառով էլ Արեւմուտքում PKK-ականներին հաճախ անվանում են պարտիզաններ, այլ ոչ թե ահաբեկիչ կամ գրոհային:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Երեք պատահականություն չի լինում. Ի՞նչ է տեղի ունեցել Սումգայիթում

Սեպտեմբերի 16-ին ադրբեջանական լրատվամիջոցները հաղորդեցին, որ Սումգայիթ քաղաքի «լվացքի փոշու արտադրամասում» պայթյուն է որոտացել, ինչից «չորրորդ աստիճանի բարդության հրդեհ է բռնկվել»: Ավելի ուշ նույն աղբյուրները տեղեկացրին, որ «պատահարի հետեւանքով կան զոհեր եւ վիրավորներ»: Արտակարգ իրավիճակների նախարարությունը հրապարակեց զոհվածների անունները: Պաշտոնապես նրանք երեքն են, սակայն մի շարք աղբյուրներ համառորեն խոսում են զոհված 6 եւ վիրավորված մեկ տասնյակից ավելի անձանց մասին: Դրանց շարքում են նաեւ ԱԻՆ աշխատակիցներ:

Հետաքրքրականն այն է, որ ադրբեջանական մամուլում այս օրերին հայտնվում են ինտրիգող տեղեկություններ: Այսպես, «Զերկալո»-ն գրել է, որ նույն օրը պայթյուն է եղել նախ Սումգայիթի «փայտամշակման արտադրամասում, այնուհետեւ՝ դրան հարակից երկու նավթամբարում»: Երրորդ պայթյունը որոտացել է վերոնշյալ «մաքրող նյութերի գործարանում»: Մեկ օրվա մեջ իրար հաջորդած երեք պայթյունները կարո՞ղ էին պատահականություն լինել:

Որոշակի ենթադրություններ կարելի է անել «լվացող նյութերի գործարանի» կապակցությամբ: Խոսելով պատահարի մասին՝ «Զերկալո»-ն մեջբերել է Ադրբեջանի պետական նավթային ընկերության մամուլի խոսնակի խոսքը, ըստ որի գործարանը չի պատկանում իրենց, այլ «մասնավոր ձեռնարկատիրական է»: Ըստ էության, սա դեռեւս ոչինչ չի ասում, բայց երբ համադրում ենք ԱԻ նախարարության տեղեկատվությունը, թե «հրշեջ ուղղաթիռներին չի թույլատրվել մոտենալ արտակարգ պատահարի տարածքին, քանի որ կրակի սյուները չափազանց բարձր էին», տպավորություն է ստեղծվում, որ պատկան մարմինը քիչ է շահագրգռված եղել հրդեհը ժամանակին մարելու եւ «գործարանը» փրկելու հարցում:

Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը իշխող ընտանիքի սեփականությունն է եւ իր ձեռքում է կենտրոնացրել ոչ միայն նավթի եւ գազի արդյունահանման, վաճառքի, այլեւ վերամշակման ողջ համակարգը՝ ներառյալ նավթաքիմիական արդյունաբերությունը: Հետեւաբար պետք է կարծել, որ «լվացող նյութերի» մասնավոր ձեռնարկատիրական գործարանը, որը քիմիական արդյունաբերության օբյեկտ էր, տնտեսական իմաստով «մրցակցում էր» իշխող ընտանիքի հետ:

Պետական նավթային ընկերությունը «տնտեսական իմպերիա» է, որ ունի սեփական՝ ոստիկանությանը ոչ ենթակա «անվտանգության ծառայություն»: Վերջինիս հիմնական զբաղմունքը «պետական կարեւորության» ճանաչված տարածքներից մարդկանց պտօրինի տեղահանումն է: Ըստ ադրբեջանական մամուլի, պետական նավթային ընկերությունը Բաքվի մերձակայքում որեւէ ազատ տարածություն չի թողել: Բացառված չէ, որ Բաքվից ընդամենը 25 կմ հեռու գտնվող Սումգայիթը նույնպես պետական նավթային ընկերության «հայրենակալվածք» է հռչակվել: Մանավանդ որ Ադրբեջանի քիմիական արդյունաբերության կենտրոնը հենց Սումգայիթն է:

Այս համատեքստում է թերեւս բացատրվում Սումգայիթում մեկ օրվա մեջ երեք պայթյուն որոտալու իրողությունը: Իշխող ընտանիքն այդ կերպ թերեւս վերացնում է տնտեսական «մրցակիցներին», որպեսզի ազատվող տարածքներն օգտագործվի պետական նավթային ընկերության, իրականում՝ Իլհամ Ալիեւի կողմից նոր արտադրություններ հիմնադրելու համար: Այլապես անբացատրելի է, որ ԱԻՆ-ի 50-ից ավելի մարտական հաշվարկները ներգրավվել են ոչ թե «գործարանի» հրդեհը մարելու, այլ «տեղայնացնելու եւ հարակից տարածքները պաշտպանելու» գործում: Այսինքն, հրշեջներն ամեն ինչ արել են, որ «գործարանը» մինչեւ վերջ մոխրանա: Եթե սա պետական ահաբեկչություն չէ, ապա ի՞նչ է:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Ռոմնիի խոսքերը զայրացրել են պաղեստինցիներին

Երեկ «**Ազգը**» գրեց հովանավորների հետ կազմակերպված ընթրիքի ժամանակ հանրապետականների նախագահության թեկնածու Միթ Ռոմնիի արած այն հայտարարության մասին, թե ամերիկացիների կեսը «խնամարկյալ» է, հարկ չի վճարում եւ օգնություն է ստանում կառավարությունից: Գաղտնաբար տեսագրված ելույթը զայրույթի ալիք է բարձրացրել ԱՄՆ-ում, իսկ դեմոկրատները կասկածում են, թե ամերիկացիների կեսից «հաշվից հանած» թեկնածուն կարող է դառնալ բոլոր ամերիկացիների նախագահը:

Ավելի ուշ հայտնի դարձավ, որ նույն ընթրիքի օրը, մասնավոր զրույցի ժամանակ Ռոմնին խոսել է նաեւ Մերձավոր Արեւելքի խնդրի մասին, այն համարելով անլուծելի: Mother Yones հրատարկությունը տարածել է Ռոմնիի ելույթի ամբողջական տեսագրությունը, որտեղ նա ասում է, որ պաղեստինա-իսրայելական հակամարտությունը հավանաբար չի ավարտվի, քանի որ Պաղեստինի ղեկավարությունը շահագրգռված չէ դրանում: Ավելին, ըստ Ռոմնիի, պաղեստինցիները ձգտում են «ավերել եւ ոչնչացնել Իսրայելը»:

«Վաշինգտոն փոստ» թերթը նշում է, որ Ռոմնիի հայտարարությունը ներհակ է հենց Հանրապետական կուսակցության ծրագրին, որը պաշտպանում է «խաղաղ եւ ապահով ապրող երկու ժողովրդավարական պետություններին՝ Երուսաղեմի մայրաքաղաքով Իսրայելին եւ Պաղեստինին» վերաբերող ձեւակերպումը:

Պաղեստինյան ինքնավարության ներկայացուցիչները խստիվ քննադատել են Ռոմնիի խոսքերը, ասելով, որ հանրապետականների թեկնածուն անձնատուր է եղել Իսրայելի ճնշման դեմ հանդիման:

«Ոչ ոք խաղաղության չի ձգտում այնպես, ինչպես պաղեստինցիները: Հաշտության պայմանագիրը մեզ համար կնշանակի ազատագրում օկուպացիայից», հայտարարել է Իսրայելի հետ վարվող բանակցություններում Պաղեստինի պատվիրակության ղեկավար Սաիբ Արիկաթը: Նա ասել է, որ պաղեստինցիները ճանաչել են Իսրայելը եւ հանդես են գալիս «Երկու պետություն երկու ժողովրդի համար» սկզբունքի օգտին:

# Ձերբակալվել է կոլումբիացի գլխավոր թմրաբարոնը



Վենեսուելայի տարածքում ձերբակալվել է կոլումբիացի գլխավոր թմրաբարոն Դանիել Էլ Լոկո Բառերան: Այդ մասին հայտարարել է Կոլումբիայի նախագահ Խուան Մանուել Սանտոսը:

«Այդ մարդը. 20 տարի չարիք է գործել Կոլումբիայում եւ այլ երկրներում: Նա կատարել է հնարավոր բոլոր հանցագործությունները եւ գործակցել «Կոլումբիայի հեղափոխական զինված ուժերի» գրոհայինների հետ», հայտարարել է նախագահը, որի խոսքերը մեջբերում է Ռոյթեր գործակալությունը:

Նախագահը ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի հատուկ ծառայություններին, ինչպես նաեւ Վենեսուելայի կառավարությանը շնորհակալություն է հայտնել Բառերայի ձերբակալմանն օժանդակելու համար:

Բառերան վերջին տարիներին Կոլումբիայում ամենից շատ որոնված հանցագործն էր: Երկրի իշխանությունները նրա կալանավորմանը նպաստող տեղեկությունների դիմաց խոստացել էին 2,7 մլն դոլար պարգեւավճար: ԱՄՆ-ը իր հերթին խոստացել էր 5 մլն դոլար:

# Ալի Ինսանովը մահացե՞լ է

Ադրբեջանական մի շարք լրատվամիջոցներ, հղում անելով անանուն «վստահելի աղբյուրների», երեկ հաղորդել են, որ բանտում «մահացել է առողջապահության նախկին նախարար Ալի Ինսանովը»: Ադրբեջանի արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության մամլո խոսնակը հերքել է այդ տեղեկատվությունը: Ըստ այդմ, Ալի Ինսանովը «առողջության որեւէ խնդիր չունի եւ օգտվում է օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքներից»: Վերջին ձեւակերպումը ենթադրությունների տեղ է թողնում: Ինչ կարիք կար հիշեցնելու, որ դատապարտված նախկին նախարարը «օգտվում է օրենսդրությամբ սահմանված իրավունքներից», եթե նրա հետ, իրոք, ամեն ինչ կարգին է: Ալի Ինսանովը առողջապահության նախարարի պաշտոնն զբաղեցրել է Հեյդար Ալիեւի կառավարությունում: 2004 թ. նրա դեմ քրեական գործ է հարուցվել, եւ նախկին նախարարը դատապարտվել է երկարաժամկետ ազատազրկման:

Նա Հեյդար Ալիեւի իշխանության այսպես կոչված «հենասյուներից» մեկն էր եւ գլխավորում էր ծագումով հայաստանցիների բավական ազդեցիկ կլանը: «Ընտրվելով» նախագահ՝ Իլհամ Ալիեւը խնդիրներ ունեցավ այդ կլանի հետ: Որոշ աղբյուրների փոխանցմամբ՝ Ալի Ինսանովը կատարել է Ջալալ Ալիեւի՝ Հեյդար Ալիեւի կրտսեր եղբոր հանձնարարությունը եւ մտադիր է եղել ներիշխանական ինտրիգներով հեռացնել ուզուրպատոր Իլհամ Ալիեւին: Տեղեկություններ կան, որ ծրագիրը բացահայտել է նախագահի անվտանգության ծառայության պետ Բեյլար Էյուբովը, որը նախապես հարել է Ջալալ Ալիեւին իշխանության բերելու նպատակին, ապա անցել Իլհամ Ալիեւի կողմը եւ մատնել նախկին գաղափարակիցներին: Ինսանովի հետ երկարաժամկետ ազատազրկման են դատապարտվել այլ նախկին նախարարներ, իսկ Ջալալ Ալիեւը, թեեւ մնացել է խորհրդարանի պատգամավոր եւ նույնիսկ «վերընտրվել», փաստացի ապրում է տնային կալանքի տակ՝ քաղաքամերձ ամառանոցում, որտեղ «ծաղիկներ է աճեցնում»: Նա մասնագիտությամբ գյուղատնտես-բուսաբան է, Ադրբեջանի ԳԱ ակադեմիկոս:

Ալի Ինսանովի վերաբերյալ վերջին պաշտոնական տեղեկությունը տարածվել էր ամիսներ առաջ: Ըստ այդմ, նախկին նախարարը «ներման խնդրագիր է հղել նախագահ Իլհամ Ալիեւին»: Այդ լուրը, սակայն, արագորեն հերքվեց Ինսանովի՝ ներկայումս արտասահմանում գտնվող ընտանիքի կողմից: Ավելին, ընտանիքը վստահեցրել էր, որ Ինսանովը «երբեք ներման խնդրագիր չի հղի ապօրինի կերպով իշխանությունը զավթածին»:

Այդ համատեքստում, բացառված չէ, որ Ալի Ինսանովի «մահվան» մասին լուրերը տարածում է նույն իշխող վարչախումբը՝ հասարակությանը նախապատրաստելով այն հեռանկարին, որ առողջապահության նախկին նախարարը բանտից կենդանի դուրս չի գալու: Ինչպես ասում են, «անկրակ ծուխ չի լինում»:

Վ. Ա.

# Մշակույթ

ԵՐԵՎԱՆՅԱՆ 6-ՐԴ ՓԱՌԱՏՈՆ

## Համերգ՝ նվիրված ՀՀ Անկախության 21-րդ տարեդարձին



**Ինչպես «Ազգն» արդեն տեղեկացրել է, օրերս մեկնարկել է Երեւանյան 6-րդ միջազգային երաժշտական փառատոնը, որի շրջանակում սեպտեմբերի 20-ին տեղի կունենա ՀՀ Անկախության 21-րդ տարեդարձին նվիրված համերգ:**

**Անկախության տոնին նվիրված հոբելյանական համերգին կհնչեն Շոստակովիչ՝ Թավջութակի կոնցերտ թիվ. 1, Վահե Շարաֆյան՝ Լակրիմոսա՝ թավջութակի, երգչախմբի, սոպրանոյի եւ սիմֆոնիկ նվագախմբի համար, Լիս՝ դաշնամուրի կոնցերտ թիվ 1, Գլազունով՝ Ջութակի կոնցերտ, Ռավել՝ Վալս: Նշենք, որպես մենակատարներ հանդես կգան Սուրեն Բագրատունին (թավջութակ, ԱՄՆ), Պոլինա Լեշչենկո (դաշնամուր, Բելգիա), Բորիս Բրովցինը (ջութակ, Մեծ Բրիտանիա), Արծվիկ Դեմուրչյան (սոպրանո, Հայաստան):**

**Մենակատարներից Սուրեն Բագրատունին լրագրողների հետ հանդիպմանն ասաց. « Շատ ուրախ եմ, որ այս անգամ կկարողանամ կատարել Վաչե Շարաֆյանի «Լակրիմոսան», որն առաջինը պետք է հնչեր իմ կատարմամբ, բայց ցավոք սրտի այն ժամանակ չստացվեց: Սակայն ուրախ եմ, որ հայաստանյան պրեմիերան ես եմ կատարելու: Այս ամսվա վերջին ձայնասկավառակ եմ թողարկելու, որում ընդգրկված կլինեն Վաչեի բոլոր ստեղծագործությունները՝ գրված ինձ համար»: Ս. Բագրատունին ասաց նաեւ, որ Երեւանյան 6-րդ միջազգային երաժշտական փառատոնի մասին չէր լսել, սակայն ուրախ է փառատոնի առկայության համար: Նշենք, որ Բագրատունին ապրում եւ ստեղծագործում է ԱՄՆ-ում, ինչպես նաեւ դասավանդում է Միչիգանի Պետական համալսարանում:**

**«Լակրիմոսայի» հեղինակ Վահե Շարաֆյանն էլ իր հերթին նշեց, որ շատ հուզված է, չնայած նա չի նվագում, այլ իր գործն են նվագում. 2009թ. «Լակրիմոսան» գրվել էր Վիգեն Չալդրանյանի «Մաեստրո» ֆիլմի համար, որն արտերկրում մեծ արձագանքի արժանացավ: Շատ երջանիկ եմ, որ այժմ այս ստեղծագործությունը պետք է կատարի Սուրեն Բագրատունին»:**

**Վ. Շարաֆյանը տեղեկացրեց, որ հոկտեմբերին Ս. Բագրատունին սաքսոֆոնահար Ջեյմս Ֆոլջերի հետ պետք է կատարեն նոր ստեղծագործության պրեմիերա՝ «Երազի եւ իրականության միջեւ», որը գրվել է պատվերով:**

**Բանախոսը տեղեկացրեց նաեւ, որ շուտով տեղի կունենա «Աբգար արքա» օպերայի պրեմիերան, որը Շարաֆյանը գրել է մեկուկես տարի առաջ. «Հույսեր կան, որ օպերան շուտով կձայնագրվի, քանի որ դրա հիման վրա Վիգեն Չալդրանյանը նկարահանելու է ֆիլմ, սակայն այժմ կան ֆինանսական խնդիրներ»:**

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Վահան Տերյանի երկերի հատընտիրը՝ Կարապետյան եղբայրների հովանավորությամբ

**Կարեն եւ Սամվել Կարապետյանների նախաձեռնությամբ եւ ֆինանսավորմամբ լույս է տեսել հայ մեծանուն բանաստեղծ Վահան Տերյանի երկերի ընտրանին: «Անցած 20 տարիներին մեր երկրում գրահրատարակչությունը բավական լուրջ խնդիրների առջեւ է կանգնել: Իսկ հայ դասականների ստեղծագործությունները ցավալիորեն չափազանց քիչ են վերահրատարակվել, եթե ավելի խիստ չարտահայտվենք: Այդ բացը հնարավորինս լրացնելու նպատակ ունի Սամվել եւ Կարեն Կարապետյանների նախաձեռնությունը՝ ընթերցողի սեղանին դնել մեր գրականության հսկաների ստեղծագործությունները», այսօր կայացած շնորհանդեսին նշեց Կարեն Կարապետյանի գրասենյակի ղեկավար Արտակ Ճաղարյանը՝ հավելելով, որ «Կարապետյանները չափազանց կարեւորում են մեր համազգային արժեքների փայփայումը, փոխանցումը սերունդներին եւ վերջիններիս դաստիարակումը այդ արժեքներով, այդ թվում՝ գրականության միջոցով»: Ճաղարյանը տեղեկացրեց, որ ժողովածուի որոշակի քանակ ուղարկվել է Ջավախք, անվճար օրինակներ են տրամադրվելու Հայաստանի, Արցախի գրադարաններին, բանասիրական ֆակուլտետ ունեցող բուհերին:**




**Տերյանական շքեղ պոեզիային անդրադարձան եւ Կարապետյանների ընտանիքի նման նախաձեռնությունները շնորհակալության արժանի գնահատեցին ժողովածուի խմբագիր, ՀՀ ԱԺ պատգամավոր Տաճատ Վարդապետյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանը, «Վահան Տերյան» մշակութային կենտրոնի տնօրեն, ՀՀ ՍԴ աշխատակազմի ղեկավար Առուշան Հակոբյանը, Վահան Տերյանի թոռը՝ Գրիգոր Էմին-Տերյանը, ՀԳՄ հրատարակչության տնօրեն Բագրատ Ալեքյանը:**

**Միջոցառումն ամբողջացավ գեղարվեստական մասով: Տերյանական հիասքանչ պոեզիայի նմուշներ ներկայացրեցին դերասանուհի Ջուլիետա Բաբայանը, ասմունքող Գայանե Սամվելյանը, երգչուհի, Ա.Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի սան Ջուլիետա Ալեքսանյանը, Երեւանի պետական կոնսերվատորիայի ուսանող, մեներգիչ Լիպարիտ Ավետիսյանը:**

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի մամլո ծառայություն

## Ի՞նչ է կատարվում բեմից այն կողմ

«**Ազգն**» այս անգամ որոշեց անդրադառնալ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հիմնախնդիրներին, որոնք առաջին հայացքից թերեւս չեն երեւում, շնորհիվ նվագախմբի աշխատանքի:

Նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր **Էդուարդ Թոփչյանն** «**Ազգի**» հետ զրույցում ասաց. «Հաճախ զգում եմ, որ իմ ցանկությունները եւ ոմանց պահանջները իրար չեն համընկնում, քանի որ ես ցանկանում եմ Հայաստանն ունենա աշխարհի լավագույն նվագախմբերից մեկը, իսկ շատերն ասում են, թե մեր երկրին արդյոք հարկավո՞ր է նման նվագախումբ,- եւ ավելացրեց,- ասում են՝ նվագախումբը բավական լավն է, էլ ինչ է պետք սրանից ավելի: Իսկ արվեստում պետք է ձգտել ավելիին»:



Մաեստրոն նշեց, որ ունեն հարյուրավոր խնդիրներ, որոնցից մեկը գործիքների հնամաշությունն է. «Քանի տարի է, ինչ այս խնդիրը որեւէ լուծում չի ստացել, եւ դա այնքան էլ մեծ ծախսերի հետ կապված չէ»:

«**Ազգ**»-ը ճշտեց. արդյոք դիմե՞լ են մշակույթի նախարարությանը խնդրին լուծում տալու նպատակով, որին ի պատասխան Էդուարդ Թոփչյանն ասաց. «Ըստ իս մշակույթի նախարարությունը պետք է տեր կանգներ այդ հարցին, որովհետեւ բոլոր հարցերով չեմ կարող անհանգստացնել երկրի նախագահին, որի իրավունքն էլ չունեմ: Մշակույթի նախարարությունից երբեւէ ոչ մի հստակ պատասխան չեմ ստացել, եւ իրենց աջակցությամբ նույնիսկ մեկ գործիք չի գնվել ֆիլհարմոնիկի համար: Վերջին գործիքը գնվել է ֆիլհարմոնիկի բարեկամների միության կողմից՝ տասը տարի առաջ: Հնամաշ գործիքներով մի կերպ ենք աշխատում, այսպես ասած՝ կպցնելով, սակայն դրա հետ մեկտեղ պահանջում են մեծ արդյունք մեր նվագախմբից»:

Է. Թոփչյանն ընդգծեց նաեւ, որ եթե ցանկանում ենք ունենալ այնպիսի նվագախումբ, ինչպիսին ինքն է երազում, ապա այնուամենայնիվ մենք պետք է ունենանք եվրոպական գոնե ցածր ստանդարտներին համապատասխան աշխատավարձ, որը մեր երկրում առայժմ հնարավոր չէ:

Հատկանշական է, որ մեր նվագախումբը համալրվել է նոր գալարափողահարով՝ Էնրիկ Կամարանա Ցիֆրես: Ընդգծենք, որ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբում երաժշտի համալրման համար ֆինանսավորել են արտերկրից, թե ո՞վ, Է. Թոփչյանը չցանկացավ մանրամասնել:

Մաեստրոն նշեց, որ Հայաստանում երբեք չի եղել միջազգային բարձր ստանդարտներին համապատասխան գալարափողահար, բացի Մերուժան Տեր-Մինասյանից, եւ մեր նոր երաժիշտը կթեթեւացնի Մերուժան Տեր-Մինասյանի գերծանրաբեռնված աշխատանքը: Թոփչյանն ասաց նաեւ, որ Հայաստանը երբեք չի ունեցել գալարափողի լավ դպրոց, ի տարբերություն ջութակի, թավջութակի եւ դաշնամուրի:

Անդրադառնալով սերնդափոխության խնդրին մաեստրոն ասաց, որ չունենք արհեստավարժ սերունդ, որի մեղավորը կրթական համակարգն է:

«**Ազգը**» անդրադարձավ նաեւ այն խնդրին, որ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում այս տարի չի բացվել թավջութակի բաժին, որի վերաբերյալ Թոփչյանն ասաց. «Ավելի վատ ժամանակներ են լինելու, որի մասին դեռեւս 11 տարի առաջ եմ ասել: Սա դեռ կեսն է, եւ եթե մենք շտապ միջոցներ չձեռնարկենք, Հայաստանը տասը տարի հետո կդառնա դասական երաժշտության ասպարեզում արաբական երկիր»:

Անշուշտ ֆիլհարմոնիկ նվագախումբը հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ եւս ներառում է իր ռեպերտուարում՝ հատկապես հայկական:

Անդրադառնալով երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունների հրատարակման խնդրին, Է. Թոփչյանն ասաց, որ բոլոր կոմպոզիտորների ստեղծագործությունները չէ, որ պետք է հրատարակվեն եւ կատարվեն. «Աշխարհում ոչ մի տեղ էլ երիտասարդ կոմպոզիտորները հնարավորություն չունեն, որ իրենց ստեղծագործությունները առաջինը մեծ սիմֆոնիկ նվագախմբերը կատարեն: Այստեղ շատ երիտասարդ կոմպոզիտորներ դիմում են ինձ, եւ եթե լավ ստեղծագործություն են ներկայացնում, ապա անպայման կատարում ենք: Սակայն պատկերացնո՞ւմ եք Վիեննայի ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժորի մոտ գնա մի երիտասարդ կոմպոզիտոր... մի շարք պատնեշների կհանդիպի եւ ընդհանրապես տեղ չի հասնի», եւ հավելեց. «Եթե մենք ցանկանում ենք պրոպագանդել հայկական երաժշտությունը ավելին, քան հիմա է արվում, ապա դրա տարբերակը միայն մեկն է՝ պետք է լինի համապատասխան նվագախումբ, որը զբաղվում է դրանով, ինչպես Խորհրդային Միության տարիներին՝ ռադիոնվագախումբն էր, եւ պետք է լինի համակարգ, որը կընտրի եւ կքաջալերի, որ այդ ստեղծագործությունները գրվեն»: Հատկանշական է, որ ֆիլհարմոնիկը տարեկան կատարում է 44 համերգ, սակայն նվագում է բոլոր սերունդների ստեղծագործությունները:

Հանդիսականն այժմ ինչ-որ չափով կրթվել է, եւ գիտի, թե ինչպես իրեն պահի համերգների ժամանակ: Եվ ուրախալի մի փաստ եւս, որ հանրության կողմից հետաքրքրություն է նկատվում դասական երաժշտության համերգների նկատմամբ, որոնք փորձում են հաղորդակցվել բարձրարժեք երաժշտության հետ, նշեց Է. Թոփչյանը:

Մաեստրոն անդրադառնալով ցավալի մի փաստի, ասաց, որ խորհրդային տարիներին գովազդվում եւ պարտադրվում էր արվեստն ու գիտելիքը, իսկ հիմա եթերով ինչ ցանկանում ես խոսիր, արա որքան ցանկանում ես, քեզ գովաբանիր, ով ինչ ցանկանում է ասում է, եւ դա կոչվում է դեմոկրատիա: Ըստ իս մենք դեմոկրատիան շատ արագ շփոթեցինք անարխիայի հետ:

«**Ազգի**» հետ զրույցում Է. Թոփչյանն ասաց, որ քանի դեռ Ֆիլհարմոնիկ նվագախմբի մի մասնիկն է եւ կատարում է իր առաքելությունը, չի լքի Հայաստանը, քանի որ կյանքի կարեւորագույն նպատակն է համարում Հայաստանի ֆիլհարմոնիկը աշխարհի լավագույն նվագախմբերի մակարդակին հասցնելը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Դուդուկի համահայկական փառատոնի փակման հանդիսավոր արարողությունը

**ՀՀ սփյուռքի նախարարության «Իմ Հայաստան» համահայկական ծրագրի շրջանակներում առաջին անգամ անցկացվող Դուդուկի փառատոնը նաեւ եզրափակում էր «Իմ Հայաստան» փառատոնը, որը տեւեց 5 ամիս: Փառատոնի ընթացքում հայրենիքում ելույթներով հանդես եկան ավելի քան 3000 մասնակից, ովքեր կայացել ու հաստատվել էին այլ երկրներում եւ տարիներ շարունակ հնարավորություն չէին ունեցել ելույթ ունենալ հայաստանյան բեմերում: Փառատոնը միավորել էր բացառիկ արվեստագետների:**

**Դուդուկի փառատոնը Հայաստան էր բերել շուրջ 10 անվանի դուդուկահարների՝ աշխարհի տարբեր ծայրերից: Փառատոնի մասնակիցները համերգներ ունեցան ոչ միայն մայրաքաղաքում, այլեւ Գյումրիում եւ Գավառում:**

**Դուդուկի փառատոնի փակման հանդիսավոր արարողությանը դուդուկահարներին նվագակցում էր Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախումբը ՀՀ վաստակավոր արտիստ Նորայր Դավթյանի ղեկավարությամբ: Ցուցադրված վավերագրական ֆիլմում արժեւորվեցին այն հայ կատարողները, ում ստեղծագործությունները հնչում են աշխարհահռչակ ֆիլմերում, հիշատակվեցին բոլոր ժամանակների երախտավոր կատարողները:**

**Ելույթ ունեցան արտերկրից ժամանած եւ հայաստանցի դուդուկահարներ: Ժողովրդական երգերի կատարմամբ հանդես եկան Գուրգեն Դաբաղյանը, Եվա Թաշչյանը, Հայկուհի Բաբախանյանը: Համերգի վերջում հնչեց սփյուռքից ժամանած դուդուկահարների համատեղ խորհրդանշական կատարումը:**

**Ասմունքով հանդես եկան սիրիահայ Սարգիս Բալխյանը եւ Երուսաղեմից Անուշ Նազաշյանը:**

**Փառատոնի ավարտին ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Նա հպարտությամբ փաստեց, որ մենք՝ հայերս ենք դուդուկի համաշխարհային մշակույթի կրողը: Նախարարը կոչ արեց փառաբանելու դուդուկի վարպետներին, ում միջոցով դուդուկը համաշխարհային անուն է վայելում, հնչում է աշխարհի բեմերում, եւ ովքեր այսօր իրենց շուրջը համախմբում են այն երիտասարդներին, որոնք դուդուկը տանում են դեպի հավերժություն:**

**Դիմելով Դուդուկի փառատոնի մասնակից կատարողներին՝ նախարարը նշեց. «Շնորհակալ եմ, որ ընդունեցիք Սփյուռքի նախարարության հրավերը՝ միասին փառաբանելու դուդուկը: Այսպիսով դուք դարձաք նաեւ փառատոնի հիմնադիրները մի բեմում, որտեղ միախառնվում են հայրենիքն ու սփյուռքը»:**

**Նախարարն «Իմ Հայաստան» փառատոնի մասնակցության հավաստագրեր եւ խորհրդանշական նվերներ հանձնեց բոլոր մասնակիցներին՝ հույս հայտնելով կրկին հանդիպել 2014 թվականին ծրագրված հերթական «Իմ Հայաստան» փառատոնին:**

# Մարզական

## «Միկան» ձեռքից բաց թողեց հաղթանակը

Երկու հանդիպումներով երեկ մեկնարկեց ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 23-րդ տուրը: Իրենց հանդիպումներն անցկացրին անցյալ տարվա երկրի գավաթակիր «Միկան» եւ ՀՀ չեմպիոն «Ուլիսը», որոնք սեպտեմբերի 24-ին կվիճարկեն Հակոբ Տոնոյանի անվան Սուպերգավաթը:


ՖՈՏՈԼՈՒՐ

«Միկան» սեփական հարկի տակ հյուրընկալել էր «Իմպուլսին»: Խաղն անցավ համառ պայքարում ու դրամատիկ ելք ունեցավ: Առաջին խաղակեսում երկու թիմերին էլ չհաջողվեց լրջորեն սպառնալ դարպասին: Իսկ ահա ընդմիջումից հետո խաղադաշտում ծավալվեցին հետաքրքրական իրադարձություններ: 60-րդ րոպեին հաշիվը վերջապես բացվեց: Հաջողության հասավ «Իմպուլսի» ավագ Նարեկ Դավթյանը, որը հսկողությունից դուրս էր մնացել եւ մոտ տարածությունից գրավեց Գեւորգ Կասպարովի պաշտպանած դարպասը:

Սակայն «Իմպուլսի» ֆուտբոլիստների ուրախությունը կարճ տեւեց: Ընդամենը 6 րոպե անց Սեմյոն Մուրադյանն օգտվելով մրցակցի դարպասապահ Գոռ Էլազյանի կոպիտ սխալից, վերականգնեց հավասարակշռությունը՝ խփելով առաջնությունում իր 10-րդ գնդակը: Հետաքրքրական է, որ բոլոր խաղերում էլ «Միկայի» հարձակվողը փոխարինման է դուրս եկել, ինչը յուրօրինակ ռեկորդ է:

«Միկան» ոգեւորված հաջողությունից, շարունակում էր գրոհել եւ 80-րդ րոպեին հաշվի մեջ առաջ անցավ: Այս անգամ աչքի ընկավ «Միկայի» պաշտպան Անդրանիկ Ոսկանյանը, որը տուգանայինի խաղարկումից հետո գլխի գեղեցիկ հարվածով գրավեց «Իմպուլսի» դարպասը:

Թվում էր, թե «Միկան» կամային հաղթանակ կտոնի ու ավելի կամրապնդի առաջատարի իր դիրքը: Սակայն «Միկան» ձեռքից բաց թողեց հաղթանակը: Խաղավարտից 3 րոպե առաջ փոխարինման դուրս եկած Դիեգո Կաստրոն «Իմպուլսին» փրկեց պարտությունից: 23 խաղից հետո «Միկան» 52 միավորով շարունակում է վստահորեն գլխավորել աղյուսակը: «Իմպուլսը» 38 միավորով ընթանում է 3-րդ տեղում:

«Ուլիսը» Կապանում 1-0 հաշվով հաղթեց «Գանձասարին», որի ղեկը ստանձնել է ուլիսցիների նախկին գլխավոր մարզիչ Սեւադա Արզումանյանը: Նրա նորամուտն անհաջող ստացվեց: Արսեն Բալաբեկյանի խփած միակ գոլն ապահովեց ուլիսցիների հաղթանակը: «Ուլիսը» շարունակեց իր համար արդեն հաճելի ավանդույթը՝ կրկին հաղթելով Կապանում: Նշենք, որ «Գանձասարի» հետ Կապանում կայացած վերջին 9 հանդիպումներից 7-ն ավարտվել են ուլիսցիների հաղթանակով, երկուսում գրանցվել է ոչ-ոքի:

Այս հաղթանակից հետո «Ուլիսը» վաստակեց 26 միավոր եւ շարունակում է ընթանալ 6-րդ տեղում: Իսկ «Գանձասարը» 30 միավորով 4-րդ տեղում է:

## Դրամատիկ պահերով լի գոլառատ մեկնարկ

**Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի մեկնարկը նշանավորվեց գոլերի առատությամբ ու պայքարի թեժությամբ: Դրամատիկ իրադարձություններով հատկապես հարուստ էր Մադրիդի «Ռեալի» եւ «Մանչեսթր Սիթիի» մրցավեճը, որում դաշտի տերերը հաշվի մեջ 2 անգամ զիջելով մրցակցին, ի վերջո կորզեցին հաղթանակը՝ 3-2: Եվ տրամաբանական էր, որ «Ռեալին» հաղթանակ պարգեւեց խաղավերջում Ռոնալդուի խփած գոլը:**

**Թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:**



**Ժոզե Մոուրինյո («Ռեալ»)-Սա շատ կարեւոր հաղթանակ էր, որը վերականգնեց մեր սասանված հեղինակությունը: Այսօր կարող էինք նաեւ պարտվել, սակայն այդ դեպքում էլ հպարտ կլինեի իմ թիմով: Բայց մենք իրավունք չունենք մրցակիցներին զիջել այնպես, ինչպես դա պատահեց «Սեւիլիայի» եւ «Խետաֆեի» հետ հանդիպումներում: Անչափ ուրախ եմ, որ իմ թիմը վերածնվեց: Ապացուցեցինք, որ եթե իսկական պրոֆեսիոնալներ ենք ու հարգում ենք ակումբի հարուստ ավանդույթները, ապա մեզ մոտ ամեն ինչ ստացվում է: Չեմ կարեկցում «Մանչեսթր Սիթիին»: Սա ֆուտբոլ է: Այսօրվա խաղում մենք ուժեղ էինք եւ արժանի հաղթանակ տոնեցինք:**

**Ռոբերտո Մանչինի («Մանչեսթր Սիթի»)-Շատ հիասթափված ենք: Առաջին խաղակեսում վատ խաղացինք, իսկ ընդմիջումից հետո կարգավորեցինք խաղը: Երբ Մադրիդում 2 գոլ ես խփում ու հաղթում ես 2-1 հաշվով, հարկավոր է ուշադիր լինել: Չէի ցանկանա, որ հետագայում էլ պաշտպանությունում այդպես գործեինք: Չի կարելի անընդհատ փորձի պակասի մասին խոսել: Մենք հիանալի ֆուտբոլիստներ ունենք, որոնք իրենց երկրների հավաքականներում են խաղում ու մրցաշրջանի ընթացքում շատ խաղեր են անցկացնում: 2-րդ խաղակեսում ցույց տված խաղի որակից գոհ եմ, իսկ արդյունքից պարզապես հիասթափված: Առջեւում դեռ 5 խաղ կա: Շատ կարեւոր է սեփական հարկի տակ Դորտմունդի «Բորուսիային» հաղթելը: Մեր նպատակը հաջորդ փուլ դուրս գալն է:**

**D խմբի մյուս խաղում «Բորուսիան» սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթեց «Այաքսին»: Հաջող խաղաց նաեւ իսպանական մյուս ակումբը՝ չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի նորեկ «Մալագան», որը C խմբում 3-0 հաշվով ջախջախեց «Զենիթին»: Այդ խմբի «Միլան»-«Անդերլեխտ» խաղում հաշիվը չբացվեց: Դա միակ խաղն էր, որում դարպասները մնացին անառիկ:**

**Նախկին ԽՍՀՄ ակումբներից մրցաշարը խոշոր հաշվով պարտությամբ սկսեց նաեւ Կիեւի «Դինամոն», որը Փարիզում 1-4 հաշվով զիջեց ՊՍԺ-ին: Այդ խաղում հաշիվը 11 մ հարվածով բացեց Զլատան Իբրահիմովիչը: Նա դարձավ յուրօրինակ ռեկորդի հեղինակ: Իբրահիմովիչը միակն է, որ չեմպիոնների լիգայում գոլի հեղինակ է դարձել 6 տարբեր թիմերում՝ «Այաքսում», «Յուվենտուսում», «Ինտերում», «Բարսելոնում», «Միլանում» եւ ՊՍԺ-ում:**

**Խաղից հետո մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:**

**Կառլո Անչելոտի (ՊՍԺ)-Մեկնարկային խաղերը միշտ էլ դժվար են ստացվում, սակայն լավ էինք նախապատրաստվել պայքարին, տակտիկապես էլ ճիշտ գործեցինք: Ինձ հատկապես դուր եկավ առաջին խաղակեսը: Շատ լավ խաղացին հարձակվողները: Այժմ մեզ սպասում է ավելի լուրջ մրցակից՝ «Պորտոն»:**

**Յուրի Սյոմին («Դինամո»)-Նման բարձր մակարդակի խաղերում աններելի է այսպիսի սխալներ թույլ տալը: Մենք մրցակցին զիջեցինք ստանդարտ իրադրություններում: Մեր 2 հենակետային կիսապաշտպաններն էլ իրենց լավ չդրսեւորեցին պաշտպանվելիս:**

**A խմբի մյուս խաղում Զագրեբի «Դինամոն» սեփական հարկի տակ 0-2 հաշվով զիջեց «Պորտոյին»: B խմբում հաղթանակով մեկնարկեց Լոնդոնի «Արսենալը»: Անգլիական ակումբը հյուրընկալվելիս 2-1 հաշվով կամային հաղթանակ տոնեց «Մոնպելյեի» նկատմամբ: Նույնպիսի արդյունքով «Շալկե-04-ը» մրցակցի դաշտում հաղթեց «Օլիմպիակոսին»:**

### ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

## Արթուր Աբրահամը կօգնի կարիքավոր երեխաներին

**2-րդ միջինքաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Արթուր Աբրահամը Գերմանիայում «Արթուր եւ ընկերներ» անվանումով գոլֆի մրցաշար էր կազմակերպել: Տոմսերի վաճառքից ստացված ողջ հասույթը տրամադրվելու է Հայաստանում ու Գերմանիայում անապահով երեխաների օգնության հիմնադրամին:**

**«Գերմանիայում ես մարզական մեծ հաջողությունների եմ հասել: Ցանկանում եմ իմ հաջողությանը մասնակից դարձնել նաեւ հասարակությանը եւ օգնել կարիքավոր երեխաներին: Այդ նպատակն էր հետապնդում գոլֆի մրցաշարի անցկացումը», նշել է Արթուր Աբրահամը:**

**Մրցաշարի հյուրերի թվում են եղել անվանի մարզիկներ, դերասաններ ու մոդելներ:**

## Արթին Էլմայանն աշխարհի ամենատարեց թենիսիստն է

Պարզվում է, որ Դավիթ Նալբանդյանն արգենտինահայ միակ թենիսիստը չէ: Արգենտինայում բնակվող 95-ամյա Արթին Էլմայանը եւս պրոֆեսիոնալ թենիսիստ է եղել ու չնայած պատկառելի տարիքին, մինչ օրս էլ չի բաժանվում սիրած մարզաձեւից: Հայ թենիսիստը 85-ից բարձր տարիք ունեցող թենիսիստների համաշխարհային դասակարգման ցուցակում ներկայումս 26-րդ տեղում է: Այդ ցուցակում ընդգրկված 39 թենիսիստներից ամենատարեցն Արթին Էլմայանն է: Այս մասին տեղեկացնում է «Մետրո» թերթը:



«Հաճախ ստիպված եմ խաղալ ինձանից ավելի երիտասարդ թենիսիստների հետ, որոնք դեռեւս 90 տարեկան չկան: Երբեմն կարողանում եմ նրանց հաղթել: Անցած տարի մրցաշարերից մեկում գրավեցի 2-րդ տեղը: Թենիսի շնորհիվ կարողանում եմ պահպանել մարզավիճակս: Եթե 2 ամիս թենիսով չզբաղվեմ, կգիրանամ», նշել է մոլորակի ամենատարեց թենիսիստը:

Արթին Էլմայանն Արգենտինայում հաստատվել է 1938-ին, 21 տարեկանում: Նա Արգենտինայի հայ համայնքի ակտիվ ներկայացուցիչներից է: Նա շաբաթը երեք անգամ արվարձանից գնում է Բուենոս Այրես, որտեսզի զբաղվի իր սիրած մարզաձեւով:

## Արոնյանը կմասնակցի «Մեծ սաղավարտի» մրցաշարին

Հայ շախմատիստների առաջատար Լեւոն Արոնյանը շուտով կրկին կնստի խաղասեղանի շուրջը: Նա կմասնակցի շախմատի «Մեծ սաղավարտ» մրցաշարի եզրափակիչ փուլին, որը կանցկացվի 2 շրջանով: Առաջին շրջանի հանդիպումները տեղի կունենան Բրազիլիայի Սան Պաուլու քաղաքում սեպտեմբերի 24-29-ը: Այնուհետեւ շախմատիստներին մեկշաբաթյա հանգիստ կտրամադրվի, որի ընթացքում նրանք կուղեւորվեն իսպանական Բիլբաո քաղաք: Այնտեղ 2-րդ շրջանը կմեկնարկի հոկտեմբերի 8-ին: Հաղթողը հայտնի կդառնա հոկտեմբերի 13-ին:

«Մեծ սաղավարտի» մրցաշարում Արոնյանի մրցակիցները կլինեն Վիշվանաթան Անանդը, Մագնուս Կառլսենը, Սերգեյ Կարյակինը, Ֆաբիանո Կարուանան եւ Ֆրանսիսկո Վալյեխոն:

## Մեդալ նվաճել չհաջողվեց

**Կոշիցեում մեկնարկել է ծանրամարտի աշխարհի պատանեկան առաջնությունը, որին Հայաստանից կմասնակցեն 6 ծանրորդներ: Առաջինը մրցահարթակ դուրս եկավ 56 կգ քաշային Արամ Համբարձումյանը: Ցավոք, նրան չհաջողվեց լուրջ պայքար մղել մրցանակային տեղերի համար: Հայ ծանրորդը երկամարտի 206 կգ (93+113) արդյունքով գրավեց միայն 7-րդ տեղը 17 մասնակիցների մեջ: Պոկում վարժությունը նա անթերի կատարեց, իսկ ահա հրում վարժությունում 117 կգ-ը բարձրացնելու Արամի 2 փորձերն էլ անհաջող էին: Ճիշտ է, նույնիսկ հաջողության դեպքում նա 7-րդ հորիզոնականից չէր բարձրանա:**

**Քաշային այս կարգում մրցակցությունից դուրս էր չինացի ծանրորդ Հաո Ցյանը, որը չեմպիոն հռչակվեց երկամարտի 260 կգ (115+145) արդյունքով: Նա 28 կգ-ով գերազանցեց 2-րդ տեղը գրաված իտալացի Միրկո Սկարանտինոյին: Բրոնզե մեդալակիր դարձավ թուրք Ֆերհատ Մազլումը՝ 221 կգ (100+121):**

## Ռայան Գիգզը Գինեսի գրքի ռեկորդակիր

**Անգլիական ֆուտբոլի անվանի վետերան Ռայան Գիգզի անունը գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում, այն էլ 4 անվանակարգում:**

**Գիգզն Անգլիայի պրեմիեր լիգայի առաջնությունների միակ մասնակիցն է, որ հանդես է գալիս հիմնադրման օրից՝ 1992-ից մինչեւ օրս: Նա նաեւ միակն է, որ այդ բոլոր մրցաշրջաններում դարձել է գոլի հեղինակ:**

**Գինեսի գրքում նրա ազգանունը նշված է նաեւ որպես պրեմիեր լիգայում բոլորից շատ խաղեր (600) անցկացրած ֆուտբոլիստ, ինչպես նաեւ ամենատիտղոսակիր խաղացող: Գիգզը «Մանչեսթր Յունայթեդում» 12 անգամ առաջնության մրցանակակիր է դարձել:**

**«Շատ հպարտ եմ իմ ռեկորդներով, բայց առավել հպարտանում եմ, որ մասնակցել եմ Անգլիայի պրեմիեր լիգայի բոլոր 21 առաջնություններին: Գինեսի ռեկորդների գրքում ազգանունդ կարդալը յուրօրինակ հաճելի զգացում է ինձ համար», նշել է Ռայան Գիգզը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Օրվա հետքերով

## ՀԱՊԿ զորավարժություններն ավարտվեցին. հակառակորդը ոչնչացված է

*1-ին էջից*

**Զորավարժության սցենարը հետեւալն է. Հայաստանի տարածքը պայմանականորեն 3 պետության է բաժանվել: Դրանցից մեկը, որը ՀԱՊԿ կազմում է, ստիպված է ռազմական օգնության համար դիմել վերոնշյալ կազմակերպությանը, ինչից հետո երկրի տարածքում տեղակայվում են ԱՍՀՈՒ ուժերը: ԱՍՀՈՒ ստորաբաժանումների ճնշմամբ հակառակորդը դուրս է մղվում պետական սահմանից եւ ոչնչացվում:**

**«Փոխգործակցություն-2012» զորավարժությունների ընթացքն ու ավարտը բարձր գնահատեցին ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան եւ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: Բորդյուժայի գնահատմամբ՝ ՀԱՊԿ-ի համար կարեւոր է, որ ուսումնառազմական խնդիրներ մշակվեն կազմակերպության անդամ պետությունների համատեղ զորքերի եւ օպերատիվ խմբերում: «Ամենակարեւորն է, որ նրանք կարողացան փոխգործակցել եւ կատարել դրված խնդիրը», ասաց ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը՝ ընդգծելով, որ զորավարժությունների մտահղացումը շատ լավ էր մշակված եւ իրագործված: Սեյրան Օհանյանի գնահատմամբ՝ զորավարժությունների նպատակը ոչ միայն գիտելիքների կատարելագործումն է, ԱՍՀՈՒ ստորաբաժանումների համադաշնակցումը, այլ նաեւ ՀԱՊԿ բոլոր երկրների ԶՈՒ համատեղելիության հիմնական պահերի կազմակերպումը: «Որպես զորավարժությունների ղեկավար՝ գոհ եմ զինծառայողների պատրաստվածությունից եւ կազմակերպված գործողություններից, մարտական ընկերության համախմբվածության բարձր մակարդակից: Մեր զինծառայողները մարտավարական դաշտում կատարեցին ուսումնառազմական խնդիրներն ու դրսեւորեցին բարձր պատրաստվածություն եւ համախմբվածություն»:**

**Զորավարժությունների ավարտից հետո նախագահական նստավայրում ընդունելություն էր: Սերժ Սարգսյանը պաշտոնական այցով Հայաստան ժամանած ՌԴ պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովի հետ քննարկեց հայ-ռուսական ռազմական եւ ռազմատեխնիկական համագործակցությունը, տարածաշրջանային անվտանգության ապահովումը եւ առկա մարտահրավերները:**

**Ավելի ուշ Սերդյուկովը պաշտպանության նախարարությունում էր: Հայ գործընկերոջ հետ քննարկվելիք գլխավոր թեման համագործակցության խորացմանն ուղղված ծրագրերն էին: Հանդիպումից հետո կայացած բրիֆինգին նախարար Օհանյանը Սերդյուկովի այցը գնահատեց շատ կարեւոր եւ խթան երկկողմ հարաբերությունների զարգացմանն ու Հայաստանի եւ տարածաշրջանի անվտանգությանը: Օհանյանի խոսքով՝ առանձնազրույցի ժամանակ քննարկվել են տարածաշրջանային եւ միջազգային անվտանգության հարցեր, պաշտպանության ոլորտում երկկողմանի համագործակցությանը, հավաքական ուժերի ծրագրերին ու ռուսական 201 բազայի իրավական հիմքի ձեւակերպմանը վերաբերող հարցեր: Նախարարը փաստեց, որ Ռուսաստանի հետ նշանակալից եւ անհրաժեշտ այնքան փաստաթղթեր են ստորագրվել, որքան չի ստորագրվել որեւէ այլ պետության հետ:**

**«Թեեւ դեռ վաղ է եզրակացություններ անելը, այնուամենայնիվ զորավարժություններն ուշագրավ էին: Պետք է փաստեմ, որ երկու երկրների միջեւ ռազմական համագործակցությունը բարձր մակարդակի վրա է», ասաց Անատոլի Սերդյուկովը:**

**Հիշեցնենք, որ ՀԱՊԿ-ի ԱՍՀՈՒ-ի ընդհանուր քանակը գերազանցում է 20.000-ը, որի կեսը ռուս զինծառայողներն են: Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը ստեղծվել է 1992-ի մայիսի 15-ին ԱՊՀ անդամ երկրների նախաձեռնությամբ: Ուզբեկստանի անդամակցության դադարեցումից հետո ՀԱՊԿ անդամ երկրներ են շարունակում մնալ Հայաստանը, Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանն ու Տաջիկստանը:**

## Կորել են

Զուլիետա Ֆերդինանդի Առուշանյանի դիպլոմները՝ AM 012366 (տրված 2009 թ.) եւ AB 042075 (տրված 2007 թ.) Երեւանի պետական համալսարանի կողմից: Համարել անվավեր:

## «Քրիստոսի կնոջ ավետարա՞ն»



Ամերիկացի գիտնականներն ուսումնասիրում են հին պապիրուսի մի պատառիկ, որտեղ ասվում է, որ Հիսուս Քրիստոսը ամուսնացած է եղել: Նրա կինը, ամենայն հավանականությամբ, Մարիամ Մագթաղինացին էր: Եթե պատառիկի իսկությունը հաստատվի, ապա Հիսուսի վերաբերյալ պատկերացումները կարող են փոխվել, նշում է CNN հեռուստաալիքը:

Պապիրուսի պատառիկի չափերն են 8x4 սմ, ունի 7 տող հին ղպտիերեն տեքստ: Անանուն հավաքորդը այն հանձնել է Հարվարդի համալսարանի գիտնականներին:

Աստվածաբանության պրոֆեսոր Կարեն Քինգը չի կասկածում պատառիկի իսկությանը, որը անվանում է «Քրիստոսի կնոջ ավետարան»:

Ձեռագիրը վերծանած տիկին Քինգը ասում է, որ հին քրիստոնեական տեքստի թարգմանությունը պարունակում է Հիսուսի խոսքերը, որոնցով նա պախարակումից պաշտպանում է մի կնոջ, որին իր կինն է անվանում, ասում է, որ աշակերտում է նրա հետ:

Հետազոտողների կարծիքով՝ խոսքը Հիսուսի անձնվեր ուղեկից Մարիամ Մագթաղինացու մասին է: Ըստ ավետարանների՝ նա ներկա է եղել Քրիստոսի խաչելությանը եւ նրա հարության ականատեսն էր:

Քինգի կարծիքով՝ ղպտիերեն տեքստը 4-րդ դարում գրվել է ըստ ավետարանիչների վկայությունների եւ թարգմանված է հին հունարենից: Ենթադրվում է, որ եկեղեցու սպասավորները ոչնչացրել են ղպտիերեն ձեռագիրը, քանի որ այնտեղ նշված տեղեկությունները ներհակ են եկեղեցու պաշտոնական գաղափարախոսությանը:

Ներկայումս պապիրուսի պատառիկը լաբորատոր հետազոտությունների վերջնական փուլում է:

**Պ. Ք.**

## Մուհամմեդ մարգարեի ծաղրանկարներ ֆրանսիական երգիծաթերթում

Համացանցում հրապարակված եւ մահմեդական մի շարք երկրներում զայրույթի ալիք բարձրացրած 14-րոպեանոց «Մուսուլմանների անմեղությունը» ամերիկյան տեսահոլովակը եւ ֆիլմը շարունակություն են ստացել երեկ, երբ լույս է տեսել Charlie Hebdo երգիծական շաբաթաթերթի հերթական համարը:

Հենց շապիկի վրա պատկերված է հաշմանդամի սայլակին նստած փաթթոցավոր մահմեդական, որին տանում է մի ուղղափառ հրեա: Ծաղրանկարը վերնագրված է «Անձեռնմխելիներ-2» եւ ակնարկում է Էրիկ Տոլեդանոյի ու Օլիվիե Նակաշի «Անձեռնմխելիներ» ֆիլմը: Այնտեղ հաշմանդամ արիստոկրատի օգնականը սեւամորթ է:

Երգիծաթերթի ներսի էջերում նույնպես կան ծաղրանկարներ, որոնցում Մուհամմեդ մարգարեն պատկերված է մերկ վիճակում: Հրատարակության կայքէջում նշվում է, որ այդ ծաղրանկարները «Արմատականություն» խորագրի տակ են:

Թերթի գլխավոր խմբագիր Ստեֆան Շարբոնիեն iTele հեռուստաալիքի եթերում հայտարարել է, որ նման նկարները անկարգությունների համար լոկ առիթ են, բայց ոչ պատճառ:

«Եթե հանենք Մուհամմեդի պատկերները, քանի որ դրանք ոմանց ցնցում են, հետո կարգելեն պատկերել մարդկանց, կենդանիներին, եւ մենք պատկերելու բան չենք ունենա, կթողարկենք 16 դատարկ էջ», հայտարարել է Շարբոնիեն:

Ֆրանսիայի վարչապետ Ժան-Մարկ Էրոն RTL ռադիոկայանին տված հարցազրույցում ասել է, որ Ֆրանսիայում կա խոսքի ազատություն: Նա երգիծանկարներից վիրավորվող բոլոր մարդկանց խորհուրդ է տվել դիմել դատարան:

Պաշտոնական այցով Կահիրեում գտնվող արտգործնախարար Լորան Ֆաբիուսը հանդես է եկել «ամեն տեսակ սադրանքների» դեմ, միաժամանակ հիշեցնելով խոսքի ազատությունը պաշտպանելու անհրաժեշտության մասին, նշում է RFI ռադիոկայանը:

Charlie Hebdo-ն քանիցս հրապարակել է Մուհամմեդ մարգարեի ծաղրանկարները: 2011-ի նոյեմբերին «արաբական գարնանը» եւ Թունիսի հեղափոխությանը նվիրված հումորի լույսընծայումը հանգեցրել էր խմբագրատան հրկիզմանը:




## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինությունը | Նվազագույն պայմաններ | | | Նվազագույն /մեկնարկային/ գինը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1 | 2 | 3 | |
| 1 | Բուզանդ 13-21 | Բազմաֆունկցիոնալ շենք | 4200.0 | Անավարտ շինություն | Մրցույթի հաղթողը պարտավոր է Երևան համայնքի բյուջե վճարել օտարման պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ՝ օտարվող հողամասի կադաստրային արժեքը, օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումից հետո 10 օրվա ընթացքում՝ առնվազն 480 000 000 դրամ, օբյեկտի կառուցման շինարարության թույլտվության տամադրման օրվանից սկսած 30 ամսվա ընթացքում՝ եռամսյակային հավասարաչափ վճարումներով ևս առնվազն 2 145 000 000 դրամ և օտարման պայմանագրի կնքման պահի դրությամբ Երևան համայնք ներկայացնել գնի մնացած մասի ապահովության համար ընդունելի բանկային երաշխիք: | Մրցույթի հաղթողը պարտավոր է Երևանի քաղաքապետի հետ՝ սահմանված կարգով համաձայնեցված ճարտարապետաշինարարական նախագծով երեք տարվա ընթացքում ավարտին հասցնել բազմաֆունկցիոնալ շենքի շինարարությունը, որի կառուցման աշխատանքները շինարարության թույլտվության տրամադրման օրվանից երեք ամսվա ընթացքում չսկսելու կամ սկսածը վեց ամսվանից ավելի ժամկետով դադարեցնելու դեպքում պարտավոր է հողամասն առկա անավարտ շինարարության օբյեկտի հետ միասին սեփականության իրավունքով անհատույց փոխանցել Երևան համայնքին կամ նրա նշած անձին՝ կրելով գնի վճարած մասի կորստի ռիսկը: | Մրցույթի հաղթողը պարտավոր է շենքի շինարարության իրականացման թույլտվությունն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի համապատասխան մարմնում գրանցել կառուցվող շենքը և իրավունք չունի, բացի ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N.599-Ա որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետում նշված օգնությունն ստացողների, որևէ այլ անձի հետ կնքելու շենքից տարածքների նախնական վաճառքի մասին պայմանագիր, քանի դեռ օտարման պայմանագրով սահմանված գնի մնացորդը լրիվ վճարված չէ: | գույքի վաճառքի համար առաջարկվող նվազագույն գինը՝ 2 877 000 000 դրամ, որից 252 000 000 դրամը կազմում է հողամասի կադաստրային արժեքը |

Մրցույթին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձինք, ովքեր Երեւան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Մրցույթի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Մրցույթին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Մրցույթը կայանալու է 2012թ հոկտեմբերի 22-ին ժամը16-ին , ք. Երեւան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2012թ հոկտեմբերի 19-ը, ժամը 16-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 19.9.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: